ISSN 1829-2003

ՎԱՐՁՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ

RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE

VARDZK

DUTY OF SOUL

N 10 2013

Սամվել Կարապետյան

ՏԵՂԵՐԻ ՎԱՆՔԸ

էջ 1

«ՎԱՐՁՔ» ՀԱՆԴԵՍԻ 1-10 ՀԱՄԱՐՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

էջ 32

ISSN 1829-2009

ՎԱՐՁՔ
ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE
YARDZK

N 10 2013

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Editor-in-chief
SAMVEL KARAPETIAN

ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ
ԷՄՄԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ԽՄԲԱԳԻՐ
Editor
EMMA ABRAHAMIAN

ՀԱՍՄԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԽՄԲԱԳԻՐ-ՍՐԲԱԳՐԻՉ
Proof-reader (Armenian text)
HASMIK HOVHANNISSIAN

ԳԱՅԱՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԹԱՐԳՄԱՆԻՉ
Translator
GAYANE MOVSISSIAN

ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՂ
Designer
ARMEN GEVORGIAN

ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE FOUNDATION
Engaged in informational Activity

ՎԿԱՅԱԿԱՆ N 03Ա089223
ՏՐՎԱԾ 13.10.2010
Certificate No. 03Ա089223
Given 13.10.2010

ՀԱՄԱՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ
ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Responsible for this issue
SAMVEL KARAPETIAN

ՏՊԱԳՐՎԵԼ Է
«ԲՅՈՒՐԱԿՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏԱՆԸ
Printed by
BYURAKN Publishing House

ՏՊԱՔԱՆԱԿԸ՝ **1000**
Number of copies: **1000**

ԵՐԵՎԱՆ, ԲԱՂՐԱՄՅԱՆ 24Գ
Baghramian 24g, Yerevan, RA

http://www.armenianarchitecture.am
http://www.raa.am
raayer@sci.am
010 52 15 25

© ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
© Research on Armenian Architecture

Նվիրվում է վանքի 800-ամյակին

ՏԵՂԵՐԻ ՎԱՆՔԸ

Սամվել Կարապետյան

Երկու խոսք. յուրաքանչյուր ազգի պատմության ընթացքում, ի դեմս հիշարժան իրադարձությունների, ամրագրվել են բազում տարելիցներ, ամյակներ ու հոբելյաններ:

Հոբելյանական է նաև «Վարձք»-ի սույն՝ 10-րդ համարը, որն էլ նվիրվում է 2013 թվականը որպես հոբելյանական տարեթիվ ունեցող պատմական հուշարձաններին:

Եվ, այսպես, 2013 թ. լրանում է Անիում Աշոտաշեն պարիսպների (963-964 թթ.) և հայ քաղկեդոնական Օշկ վանքի (963-973 թթ.) հիմնադրման 1050-ամյակը:

1000-ամյակն են բոլորել Կեչառիս վանքի Սբ. Գրիգոր, Հավուց Թառ վանքի Սբ. Ամենափրկիչ և Անիի Գագկաշեն եկեղեցիները:

950 ամյակով (1063 թ.) նշանավորվել է Սանահինի գրատուն-մատենադարանը:

Ճիշտ 900 տարի առաջ նորոգվել է Հաղպատի Սբ. Նշան եկեղեցին (1113 թ.):

Կառուցման կամ հիմնադրման 800-ամյակն են բոլորել (1213 թ.) Կեչառիս վանքի Սբ. Նշան եկեղեցին, Հավուց Թառ վանքի Սբ. Կարապետ մատուռը, Մխիթար Գոշի դամբարանը, Շորժայի թևավոր խաչը, Արագյուղի իջևանատունը, Տեղերի Սբ. Աստվածածին, Ծովիզի Մորոձորո և Բանուշ գետի հովտում գտնվող Խնձորեքսի վանքերը:

650-ամյա են (1353 թ.) Լեռնանիստ գյուղի (նախկինում՝ Վերին Ախտա, այժմ՝ Հրազդան քաղաքի շրջագծի մեջ), Թեոդոսիայի Սբ. Սարգիս և Լվովի Սբ. Աստվածածին եկեղեցիները:

400-ամյա են (1613 թ.) Տաթևի Մեծ և Հալիձորի Հարանց անապատները, Նոր Ջուղայի Մեծ Մեյդանի Սբ. Աստվածածին եկեղեցին: Ի դեպ, 1613 թ. է նորոգվել նաև Շոռոթի Սբ. Նշան եկեղեցին:

350-ամյակն էլ բոլորեցին (1663 թ.) Տաթևի Մեծ անապատի Սբ. Աստվածածին, Խնձորեսկի Սբ. Հռիփսիմե, Ագուլիսի Խծաձորի թաղի Սբ. Հովհաննես-Մկրտիչ (ոչնչացված է), Ծոբոփոր գավառում գտնվող Բնիձորի Մեծ վանքի եռահարկ, Նոր Ջուղայի Սբ. Մինաս եկեղեցիները և Էջմիածնի Սբ. Գայանե եկեղեցու եռակամար սրահը:

300-ամյա (1713 թ.) հնություն են ներկայացնում Վանա լճի Կտուց կղզու վանքի եկեղեցու գմբեթը և Տփղիսի Զրկինյանց եկեղեցին (ոչնչացված է):

250 տարին են բոլորել (1763 թ.) Աղթամարի Սբ. Խաչ վանքի զանգակատունը և Արցախի Թաղասեռ գյուղի կամուրջը:

200 տարին է բոլորել (1813 թ.) Սալմաստ գավառի Հողար գյուղի եկեղեցին:

150-ամյա գոյությամբ նշանավորվել են Լոռու Ակներ գյուղի, Ալաստանի հայ կաթողիկե և Ախալցխայի Սբ. Նշան եկեղեցիները: Ի դեպ, 1863 թ. է բացվել Երևանի Աստաֆյան (Աստաֆևսկայա) փողոցը:

Վերջապես իրենց մեկդարյա գոյությունն են լրացրել Օշականի Սբ. Մեսրոպյան դպրոցի նոր շենքն ու Սարչապետ գյուղի հայ կաթողիկե եկեղեցին:

Հոբելյանական տարեթվերը նկատի առնելով, անշուշտ, արժեր վերը հիշատակված հուշարձաններից յուրաքանչյուրին նվիրված մի առանձին ուսումնասիրություն հրատարակել[1], սակայն ստորև հնարավորություն ունենք ներկայացնելու դրանցից միայն մեկը, այն է՝ Տեղերի վանքը:

Տեղադրություն. գտնվում է Արագածոտնի մարզի Աշտարակի ենթաշրջանի Աղցք և Օրգով գյուղերի միջակայքում՝ առաջինից ուղիղ գծով 4 կմ հյուսիս, իսկ երկրորդից 1,2 կմ արևմուտք՝ ծովի մակերևույթից 1691 մ բարձրությամբ փոքրիկ հարթակի կենտրոնում (N 40°20.42.40´´; E 44°14.23.40´´):

Վանքից դեպի Արարատյան դաշտ բացվող լայնածոց տեսարանը, իրոք, տպավորիչ է. «Տեղեր. կոչեցեալ ի բնակչացս և յարձանագրութիւնս այլ մենաստանաց յայս անուն. հեռի է ի վերոյիշեալ Աղցք գեղջէ դէպ ի վեր ի լեառնն ընդ հիւսիս իբրև ժամ մի ի բարձրաւանդակ դրութեան յարևմտեան եզեր փոքրիկ ձորակի՝ որ փոքր ինչ յստորև խառնի ի մեծ ձորն Անբերդայ...: Այս մեծագործ եկեղեցի՝ որ յամենահովասուն վայրի, ի վայելուչ բարձրադիտակ տեղւոջ, դիտող յընդարձակ դաշտ Արարատայ»[2]:

Անվան մասին. պատմագիտությանը ցարդ հայտնի չէ Տեղեր տեղանվան ծագման վերաբերյալ գիտական որևէ մեկնաբանություն: Հայտնի միակ բացատրությունը ԺԸ դարում գրի առնված հրաշապատում-ավանդազրույցն է, որի համաձայն՝ իբր

1 Կարծում ենք, որ պատմական հուշարձանների հոբելյանները լավ առիթ են, որպեսզի գոնե տվյալ բնակավայրում տեղական իշխանությունների կամ պարզապես նախնյաց հիշատակներին նախանձախնդիր անհատների նախաձեռնությամբ կազմակերպվեն հուշարձանի տարելիցը նշանավորող կրթամշակութային, ճանաչողական միջոցառումներ:

2 Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ **Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեանց Շահրիարցւոյ** միաբանի սրբոյ Էջմիածնի, հ. Բ, Ս. Էջմիածին, 1842, էջ 68-69:

Տեղերի վանքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Թ. Թորամանյանի, 1924 թ.)

Տեղերում հաստատված Գրիգոր Լուսավորչի աչքին մի օր երևացել է Աստվածածինը բազում հրեշտակներով և իսկույն չքացել: Տեսիլքի վկան իբր եղել են նաև Տեղերի բնակիչները, որոնց մի մասը սկսել է մատնացույց անել մի վայր և ասել՝ այստեղ էր, մյուսները՝ ո՛չ, այնտեղ էր, ուստի վայրը, որտեղ հետագայում կառուցվում է ներկայիս վանքը, կոչվում է Տեղեր. «...վասն այսորիկ կոչի Տեղերոյ սուրբ Աստուածածին, զի այսպէս ասացեալ լինի, թէ՝ յորժամ միածին որդին աստուծոյ էջ ի Վաղարշապատ քաղաք, և եցոյց սրբոյ Լուսաւորչին մերոյ՝ կամարօք զձև սրբոց եկեղեցեացն, և սուրբն Գրիգոր սկսաւ շինել զսուրբ աթոռս Հայաստանեայց, բայց՝ և զի ժամանակն էր սաստիկ շողային և տօթաբեր՝ նմին իրի՝ որ կարէր հանդուրժել աստ յաղագս որոյ՝ արար ինքեան հովանիսն զՏեղեր, և անդ բնակէր անդադար աղօթիւք: Յաւուր միում սուրբ Աստուածածինն ծիրանագոյն զգեստուք անդ երևեցաւ սրբոյ Լուսաւորչին բազմօք հրեշտակօք և անճառելեաւ լուսով, որ ճառագայթեալ սփռեցաւ ընդ ամենայն տեղիս: Զոր իբրև տեսին՝ բնակիչք տեղւոյն՝ արք և կանայք ընթացան ի տեղի նորա՝ յերկրպագութիւն սրբոյ Աստուածածնին, և նա վերացաւ: Իբրև ոչ գտին՝ զարմացան յոյժ, և սկսան ոմանք ասել՝ յայս տեղ էր սուրբ Աստուածածինն, և կէսք թէ յայն տեղ էր. վասն որոյ՝ կոչեցաւ այն Տեղերոյ ս ուրբ Աստուածածինն»[3]:

Հենց այս անվամբ վանքը վկայված է ԺԳ դարին վերաբերող կառույցի որմերին պահպանված բազմաթիվ վիմագրերում, սակայն հարկ է նշել, որ ուշ միջնադարում վանքը հայտնի է եղել նաև Լրջակապույտ Սբ. Նշան անվամբ: Այս անվանակոչությանն առաջին անգամ հանդիպում ենք 1656 թ. աշխարհացույցի հիշատակարանում. «Տեղերավանք, ուր կա Լրջակապուտակ ս. Նշանն...»[4], ապա՝ 1691 թ. «Տեղավանք Լրջակապոյտ սուրբ Նշան»[5], ԺԸ դարի 2-րդ կեսին. «Յորում և կայ մեռելահարոյց և սքանչելագործ սուրբ Նշանն, որ և Լրջակապուտ սուրբ Նշան ևս կոչի: Առ որ եթէ ոք կատարեալ հաւատով, աներկբայ յուսով և ջերմեռանդ սիրով դիմեալ երթայցէ, ի հիւանդութեանց բժշկի, ի ցաւոց ապաքինի, և ի յայսահարութենէ ազատի»[6]:

Այնուամենայնիվ, ինչպես երևում է, ԺԷ-ԺԸ դարերում հանրահռչակ նոր անունն ի զորու չի եղել մոռացության մատնել վանքի նախնական անունը: Համենայն դեպս, 1765 թ. հիշվում է. «Տեղերավանքն որ ասի սուրբ Աստուածածին»[7]:

Ի դեպ, արդեն ուշմիջնադարյան վկայություններում Տեղերն ավելի հաճախ հանդիպում է Դըղր կամ Դղեր անվանաձևերով. «Տեղեր կամ ըստ տեղական յորջորջման Դղեր գիւղը...»[8]: Տեղանվան

3 Դիւան հայոց պատմութեան, հ. Գ, Թիֆլիս, 1894, էջ 831-832:

4 **Թօփճեան Յ.**, Յուցակ ձեռագրաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Ա, Վաղարշապատ, 1898, էջ 77:

5 **Uluhogian G.**, Un' antica mappa dell' Armenia. Ravenna, 2000, p. 76.

6 Դիւան հայոց պատմութեան, նշվ. հատորը, էջ 832:

7 Նշվ. աշխ, էջ 804:

8 Նշվ. աշխ, էջ 831:

Տեղերի վանքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2009 թ.)

արտասանության այս վերջին ձևն ավելի կիրառություն էր գտել այլազգիների շրջանում. «...զոր և այլազգի մահմէտականք յորջորջեն Տըղըր առ ի չկարող լինել արտաբերել զհայացի անունս Տեղեր...»[9]:

Տեղեր գյուղի պատմությունից. առնվազն վաղ միջնադարից հայաբնակ Տեղեր գյուղում այլազգիներն առաջին անգամ հաստատվում են ԺԹ դարի սկզբներին, երբ Երևանի խանության դեմ իրականացված վրացական արշավանքներն ավարտվում են Արագածոտնի հազարավոր հայերի՝ դեպի Վրաստան գերեվարությամբ: Համենայն դեպս, 1830-ական թվականներին Տեղերն արդեն թրքաբնակ էր. «...բնակիչք անդէն այժմ այլազգի մահմէտականաց՝ տունք 6»[10]:

Վերջիններս գյուղը պարսպում են հողաշաղախյա և անմշակ քարի հասարակ պատով. «...նախ քան զամս իբրև յիսուն այլազգի բնակիչք շուրջ զգերդաստանօք հրեանց և զեկեղեցեաւն ածեալ կառուցեալ են պարիսպ ի հասարակ քարանց և ի հողոյ ի պատճառս ասպատակութեանց, այլ այն պարիսպ ևս քայքայեալ՝ կայ մասամբ ինչ ի կանգուն»[11]:

Ստուգապես հայտնի չէ, թե Տեղեր գյուղը վերստին ե՞րբ է դարձել հայաբնակ, սակայն, ըստ ամենայնի, դա տեղի է ունեցել ԺԹ դարի 2-րդ կեսին: Համենայն դեպս, արդեն 1909 թ. Տեղերն ուներ 464 բնակիչ (255 ար., 209 իգ.)[12]: Մինչդեռ 1911 թ. վկայված են 42 տուն և միայն 255 շունչ (146 ար., 109 իգ.): Ուշագրավ է նշյալ թվականի հուլիսի 12-ին Տեղեր գյուղի բնակիչների՝ Խաչիկ ծայրագույն վարդապետ Դաղյանի կազմած անվանացանկը.

1. «Գարեգին քահանայ Տէր-Դաւթեան Տէր-Աւետիսեանց՝ 44 ամաց, կինը՝ Սոփիա Մարտիրոսեան՝ 40 ամաց: Որդիք՝ Փառանձեմ՝ 15, Փառանոյշ՝ 13, Հմայեակ՝ 10, Դաւիթ՝ 5 ամաց (3 ար., 3 իգ.):
2. Աբել Տէր-Դաւթեան Տէր-Աւետիսեան՝ 40 ամաց, կինը՝ Հռիփսիմէ Ալեքսանեան՝ 35 ամաց: Որդիք՝ Մարիամ՝ 14, Արուսեակ՝ 12, Աշոտ՝ 8, Ներսէս՝ 4 ամաց (3 ար., 3 իգ.):
3. Խաչատուր Տէր-Դաւթեան Տէր-Աւետիսեանց՝ 55 ամաց, կինը՝ Իսկուհի Բաղդասարեանց՝ 55 ամաց: Որդիք՝ ա) Սիրական՝ 30 ամաց, կինը՝ Շամամ Օհանեան՝ 28 ամաց, որդիք՝ Բագրատ՝ 7, Արփենիկ՝ 4, Նահապետ՝ 2; բ) Անախաս Խաչատրեան՝ 14 ամաց (4 ար., 4 իգ.):

9 **Շահխաթունեանց Յ.**, նշվ. աշխ, էջ 68:

10 Նշվ. աշխ, էջ 69:

11 Նույն տեղում: Ի դեպ, դեռևս 1830-ական թթ. հիմք ընդունելով Տեղեր գյուղի տարածքում առկա մշակված հողակտորների սակավությունը, ենթադրվել է, որ Տեղեր անվամբ գյուղ չի եղել, այլ սոսկ վանք իր միաբաններով. «Եւ որպէս երևի չե՛ն եղեալ աստ յառաջագոյն ամուսնաւոր գերդաստանք, զի կարի սակաւք են անդաստանք սերմանց. այլ միայն եղեալ է մենաստան կուսակրօնից. և թէ եղեալ իցէ աստ նախ քան զշինութիւնն այսր տաճարի բնակութիւն կուսակրօնից և եկեղեցի նոցա, հաւանական երևի: Կացարանք կամ տունք նոցին կուսակրօնիցն չունին ինչ հետս շինութեանց, քանզի միշտ փոփոխ բնակութեամբ այլազգի մահմէտականաց՝ քակեալ և անհետացեալ են...» (նույն տեղում):

12 ՀԱԴ, ֆ. 48, ց. 1, գ. 299, թ. 11:

4. Գրիգոր Տէր-Դաւթեան Տեր-Աւետիսեանց՝ 35 ամաց, կինը՝ Սուսանբար Սահակեան 30 ամաց: Որդիք՝ Վահան՝ 12, Վահագն՝ 5, Զէրէթ՝ 6, Վասակ՝ 3, Ոսկեհատ՝ 1 ամաց (5 ար., 2 իգ.):

5. Տանուտերի մեծ եղբայր Ալէքսան Աստուածատրեան Աւետիսեանց՝ 70 ամաց, կինը՝ Մարիամ Յակոբեան՝ 60 ամաց: Որդիք՝ Եռոք Ալէքսանեան՝ 30, կինը՝ Անոյշ Սահակեան՝ 25 ամաց, որդիք՝ Արփենիկ՝ 3, Անդրանիկ՝ 1 ամաց; Աւետիս Աստուածատրեան Աւետիսեանց՝ 50 ամաց[13], կինը՝ Թամամ Կարապետեան՝ 45 ամաց: Որդի՝ Թումաս՝ 15 ամաց (5 ար., 4 իգ.):

6. Դաւիթ Աստուածատրեան Աւետիսեանց՝ 38 ամաց, կինը՝ Գիւլիզար Իխտիարեան՝ 35 ամաց: Որդիք՝ Արմենակ՝ 12, Ասատուր՝ 4, Վարսենիկ՝ 8, Աստղիկ՝ 1 ամաց (3 ար., 3 իգ.):

7. Երեցփոխ Սահակ Մուրադեան՝ 70 ամաց, կինը՝ Հերիքնազ Պօղոսեան՝ 60 ամաց: Որդիք՝ Աբել Սահակեան՝ 25, կինը՝ Սալաթին Խաչատրեան՝ 20, որդիք՝ Վարթուշ՝ 5, Շամամ՝ 2 ամաց (2 ար., 4 իգ.):

8. Սարդար Մարտիրոսեան Մուրադեան՝ 40 ամաց, կինը՝ Հռիփսիմէ Աւետիսեան՝ 35 ամաց: Որդիք՝ Մեխակ՝ 12, Մէլիք՝ 8, Միսակ՝ 7, Կնեազ՝ 5, Շուշան՝ 3 ամաց (5 ար., 2 իգ.):

9. Այրի Թամամ Յարութիւնեանց, կին հանգուցեալ Գաբրիէլ Մարտիրոսեանցի՝ 35 ամաց: Որդիք՝ Վիրաբ՝ 12, Գեղամ՝ 6, Աստղիկ՝ 4 ամաց (2 ար., 2 իգ.):

10. Մարտիրոս Մուրադեան՝ 80 ամաց, կինը՝ Ելիսոյ Նազարեան՝ 70 ամաց: Որդիք՝ Աղասի Մարտիրոսեան՝ 35 ամաց, կինը՝ Հնազանդ Գրիգորեան՝ 30 ամաց: Որդիք՝ Ջաւահիր՝ 5, Խաթուն 3 ամաց (2 ար., 4 իգ.):

11. Գալուստ Օհանեան՝ 66 ամաց, կինը՝ Զարթար Պարսամեան՝ 60 ամաց: Որդիք՝ ա) Մանուկ՝ 22, կինը՝ Սիրանոյշ Կարապետեան՝ 20 ամաց; բ) Փիլիպպոս Գալստեան՝ 6 ամաց; գ) Անղալութ՝ 12 ամաց (3 ար., 3 իգ.):

12. Գրիգոր Օհանեան՝ 70 ամաց, այրիացեալ: Որդիք՝ ա) Ռոստոմ Գրիգորեան՝ 30 ամաց, կինը՝ Եսթեր Յակոբեան՝ 25 ամաց: Որդիք՝ Մամիկոն՝ 7, Յովակիմ՝ 4, Յարութիւն՝ 1 ամաց; բ) Թադէոս Գրիգորեան՝ 25, կինը՝ Աշխէն Եփրէմեան՝ 20 ամաց: Որդի՝ Վաղարշակ՝ 1 ամաց; գ) Թէոս Գրիգորեան՝ 23, կինը՝ Մարինոս Կարապետեան՝ 20 ամաց (8 ար., 3 իգ.):

13. Գասպար Գրիգորեանց՝ 40, կինը՝ Հինօ Ղարիբեան՝ 35 ամաց: Որդիք՝ Բէհբուդ՝ 16, Օհանէս՝ 12, Հայրիկ՝ 10, Խաչատուր՝ 3, Ազնիւ՝ 4 ամաց (5 ար., 2 իգ.):

14. Մկրտիչ Գրիգորեան՝ 36 ամաց, կինը՝ Հնազանդ Հովելեան՝ 30 ամաց: Որդիք՝ Խաչատուր՝ 8, Շաւարշ՝ 3 ամաց (3 ար., 1 իգ.):

15. Պետրոս Աւետիսեան Յարութիւնեանց՝ 46, կինը՝ Ծովինար Սայեադեան՝ 40: Որդիք՝ ա) Ղազար Աւետիսեան՝ 25, կինը՝ Աննա Մկրտչեան՝ 20 ամաց; բ) Սամսոն՝ 10; գ) Մարգարիտ՝ 12; դ) Նախշուն՝ 5 ամաց (3 ար., 4 իգ.):

16. Թադէոս Աւետիսեան Յարութիւնեան՝ 42 ամաց, այրիացեալ: Որդիք՝ Մարկոս՝ 12, Արուսեակ՝ 10, Արաքսեա՝ 6, Փառանձեմ՝ 4 ամաց (2 ար., 3 իգ.):

17. Թումաս Աւետիսեան Յարութիւնեան՝ 40, կինը՝ Կատարինէ Նազարեան՝ 35 ամաց: Որդիք՝ Զարդար՝ 10, Փիրուզէ՝ 4, Նորաղջիկ՝ 1 ամաց (2 ար., 3 իգ.):

18. Յարութիւն Սիմօնեան Աւետիսեանց՝ 25, կինը՝ 20 (անունը նշած չէ): Ղուկաս Սիմօնի Աւետիսեանց՝ 20, քոյր՝ Մարիամ՝ 14 ամաց (2 ար., 2 իգ.):

19. Այվազ Գէորգեան Յարութիւնեան՝ 35, կինը՝ Շողակաթ Գալստեան՝ 18 ամաց (1 ար., 1 իգ.):

20. Յակոբ Մարտիրոսի Խլաթեանց՝ 80, կինը՝ Զարթար Սարգսեան՝ 70 ամաց: Հոգէորդիք՝ Յովհաննէս Յակոբեան՝ 20, կինը՝ Սաթենիկ Ալէքսանեան՝ 18, որդի՝ Պետրոս՝ 2 ամաց: Մարիամ (մայր Յովհաննէսի) Գիլնազարեանց՝ 50, դուստր Վերգինէ Խաչատրեանի՝ 12 ամաց (3 ար., 4 իգ.):

21. Ռափայէլ Գէորգեան Դաւթեանց՝ 37, կինը՝ Եսթեր Ասատուրեան՝ 34 ամաց: Որդիք՝ Սոփիա՝ 14, Համբարձում՝ 10, Լուսիկ՝ 4 ամաց (2 ար., 3 իգ.):

22. Յակոբ Մատթէոսեան Դաւթեանց՝ 18 ամաց: Մայր՝ Մարիամ Մովսէսեան Դաւթեանց՝ 40 ամաց: Եղբ.՝ Մամիկոն Մատթէոսեան՝ 15, Գրիգոր Մատթէոսեան՝ 12, Թէոդորոս Մատթէոսեան 10 ամաց (4 ար., 1 իգ.):

23. Յովսէփ Սիմէօնեան Յովսէփեանց՝ 60, այրիացեալ: Որդիք՝ ա) Մամիկոն Յովսէփեանց՝ 24, կինը՝ Եղիսաբեթ Խաչատրեան՝ 20, Մարգարիտ՝ 3 ամաց; բ) Գրիգոր Յովսէփեանց՝ 22, կինը՝ Ուստիանէ Սահակեան՝ 20 ամաց; գ) Ռուբէն Յովսէփեանց՝ 16; դ) Երուանդ Յովսէփեանց՝ 14; ե) Սերովբ Յովսէփեանց՝ 12; զ) Յարութիւն Յովսէփեանց՝ 10 ամաց (7 ար., 3 իգ.):

24. Կնեազ Յովսէփեան Յարութիւնեանց՝ 40, կինը՝ Մաթան Մինասեան՝ 35: Որդիք՝ Խումար՝ 14, Անոյշ՝ 9, Բենիամին՝ 8 ամաց (2 ար., 3 իգ.):

25. Կարապետ Մկրտչեան Յարութիւնեանց՝ 40, կինը՝ Ուստիանէ Աւետիսեան՝ 35: Որդիք՝ Շաւարշ՝ 12, Արեգնազան՝ 9, Անդրանիկ՝ 7, Սենեքերիմ՝ 5, Լևոն՝ 2 ամաց (5 ար., 2 իգ.):

26. Անդրեաս Բաղդասարեան Խալաթեանց՝ 41, կինը՝ Սանդուխտ Վարդանեան՝ 35: Որդիք՝ Նարինքէկ՝ 13, Համազասպ՝ 6, Սրբուհի՝ 4 ամաց (3 ար., 2 իգ.):

27. Ալեքսան Մկրտչեան Փանոսեանց[14]՝ 60, կինը՝ Մարգարիտ Մարտիրոսեան՝ 60 ամաց: Որդիք՝

13 Ավետիս Աստվածատրյանը տանուտիրոջ օգնականն էր (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 181, թ. 31):

14 1916 թ. վարել է երեցփոխի պաշտոն (ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 181, թ. 30):

ա) Մամիկոն Ալեքսանեան՝ 35, կինը՝ Փափար Մեսրոպեան՝ 25, որդիք՝ Մկրտիչ՝ 6, Արամայիս՝ 2 ամաց; բ) Արշակ Ալէքսանեան՝ 30; գ) Ռուբէն Ալէքսանեան՝ 21; դ) Քերովբէ Ալեքսանեան՝ 18 ամաց; եղբոր դուստր՝ Հայկանոշ Սեդրակեան՝ 12 ամաց (7 ար., 3 իգ.):

28. Համբարձում Մարգարեան Օհանեանց՝ 50, կինը՝ Վառօ Նուռօեան՝ 40 ամաց: Որդիք՝ Երեմիա՝ 14, Աստուածատուր՝ 5, Դաւիթ՝ 1, Մարիամ՝ 10 ամաց; քոյր՝ Հեղնար Մարգարեան՝ 40 ամաց (4 ար., 3 իգ.):

29. Մովսէս Վարդանեան Օհանեանց՝ 60, կինը՝ Շուշանիկ Մուրադեան՝ 50 ամաց: Որդիք՝ Իգնատիոս Մովսէսեան՝ 30, կինը՝ Շուշանիկ Գրիգորեան՝ 25, որդիք՝ Ստեփաննոս՝ 10, Սիրական՝ 5, Պատուական՝ 1 ամաց; բ) դուստր՝ Սաբեթ Մովսէսեան՝ 14 ամաց (5 ար., 3 իգ.):

30. Իսրայէլ Յակոբեան Մուրադեանց՝ 50, կինը՝ Էթար Ղարիբեանց՝ 40 ամաց: Որդիք՝ ա) Գէորգ Իսրայէլեան՝ 24, կինը՝ Շուշան Միլիտոնեան՝ 15 ամաց; բ) Պետրոս Իսրայէլեան՝ 22; գ) Յարութիւն Իսրայէլեան՝ 20 ամաց (4 ար., 2 իգ.):

31. Սամսոն Համբարձումեան Գէորգեանց՝ 30, կինը՝ Նազլու Յակոբեան՝ 25, որդիք՝ Կարասիմ՝ 8, Աշխէն՝ 2 ամաց (2 ար., 2 իգ.):

32. Գրիգոր Համբարձումեան Գէորգեանց՝ 28, կինը՝ Շողեր Յակոբեան՝ 25, որդի՝ Համբարձում՝ 1 ամաց; եղբայր՝ Գալուստ Համբարձումեան Գէորգեանց՝ 22 ամաց (3 ար., 1 իգ.):

33. Բաղդասար Գիլնազարեան Բաղդասարեանց՝ 50, կինը՝ Մարիամ Յովհաննեանց՝ 30 ամաց: Որդիք՝ ա) Խաչատուր Բաղդասարեան՝ 25, կինը՝ Սուսանբար Ներսէսեան՝ 20 ամաց; բ) Սահակ Բաղդասարեան՝ 10; գ) Խաթուն Բաղդասարեան՝ 2 ամաց; հայրը՝ Գիլնազար Բաղդասարեանց՝ 100 ամաց (4 ար., 3 իգ.):

34. Ալէքսան Գիլնազարեան Բաղդասարեանց՝ 30, կինը՝ Սալի Կրպեյեան՝ 20, որդիք՝ Կարապետ՝ 10, Անուշաւան՝ 1 ամաց (3 ար., 1 իգ.):

35. Գրիգոր Գիլնազարեան Բաղդասարեանց՝ 25, կինը՝ Շուշան Գրիգորեան՝ 20, որդի՝ Վարթուշ՝ 2 ամաց (1 ար., 2 իգ.):

36. Մատթէոս Բաբայեան Կարապետեանց՝ 35, կինը՝ Սենախաս Կարապետեան՝ 30, որդիք՝ Արևշատ՝ 12, Բաբգէն՝ 3, Հռիփսիմէ՝ 15, Մանեակ՝ 8, Լուսիկ՝ 5 ամաց (2 ար., 5 իգ.):

37. Մարկոս Բաբայեան Կարապետեանց՝ 30, կինը՝ Անթառամ Սահակեան՝ 25 ամաց, որդի՝ Ղումաշ՝ 1 տարեկան: Այրի Գրիգոր Յակոբեան Մուրադեանց՝ 80 ամաց (2 ար., 2 իգ.):

38. Ստեփան Գրիգորեան Յակոբեանց՝ 30, կինը՝ Մէրի Սահակեան՝ 25, որդիք՝ Զարթար՝ 10, Գեղամ՝ 7, Մեսրոպ՝ 5, Յովհաննէս՝ 2 ամաց (4 ար., 2 իգ.):

39. Հայրապետ Յակոբեան Մուրադեանց՝ 40, կինը՝ Սոփեր Աբգարեան՝ 35 ամաց: Որդիք՝ ա) Մնացական Հայրապետեան՝ 20, կինը՝ Գիլվարդ Մարգարեան՝ 18, որդիք՝ Թորգոմ՝ 3, Վարթուշ՝ 1 ամաց; բ) Յակոբ Հայրապետեան՝ 10; գ) Կատարինէ Հայրապետեան՝ 12 ամաց (4 ար., 4 իգ.):

40. Եղիազար Ղարիբեան Յակոբեանց՝ 35, կինը՝ Սոնեա Դաւթեան՝ 30, որդիք՝ Յարութիւն՝ 10, Գրիշ՝ 8, Գօրգի՝ 3; եղբ.՝ Խաչատուր Ղարիբեան Յակոբեանց՝ 30, կինը՝ Զաւահիր Մնացականեանց՝ 25 ամաց: Որդիք չիք; եղբորորդի՝ Մատթէոս Կարապետեան Ղարիբեանց՝ 15 ամաց (6 ար., 2 իգ.):

41. Պօղոս Ղարիբեան Յակոբեանց՝ 40, կինը՝ Ովսաննա Ներսէսեան՝ 35, որդիք՝ Գառնիկ՝ 12, Գէորգ՝ 8, Յովհան՝ 3, Արաքսեա՝ 4 ամաց (4 ար., 2 իգ.):

42. Սահակ Օհանեան Գիլնազարեանց, այրիացեալ: Որդի՝ Հռիփսիմէ Սահակեան՝ 14 ամաց; եղբայր՝ Տիգրան Օհանեան Գիլնազարեանց՝ 24 ամաց (2 ար., 1 իգ.)»[15]:

Տեղերի՝ Տեղերավանքից ավելի հին հուշարձանները. եթե ո՛չ գրավոր աղբյուրները և ո՛չ էլ նյութական մշակույթի մնացորդները բավարար հիմք չեն տալիս պնդելու, որ Սբ. Աստվածածին եկեղեցու կառուցումից (1213 թ.) առաջ տեղում պաշտամունքային որևէ կառույց է եղել, ապա պահպանված խաչքարերի բեկորները փաստում են, որ նախքան ցարդ կանգուն վանքի հիմնումը տեղում եղել է առնվազն խաչքարերով գերեզմանոց: Սրանց թվում առաջինը հիշատակելի է Ե-Է դդ. բնորոշ թևավոր խաչի բեկորը, որն ընկած է վանքի հարավարևմտյան կողմում գտնվող կիսավեր եկեղեցու ներսում: Բեկորն իրենից ներկայացնում է թևավոր խաչի վերին կամ հորիզոնական թևերից մեկի վերջույթը և ունի 17,5 x 19,5 սմ չափեր: Կերտված է կարմիր տուֆից:

Տեղեր. թևավոր խաչի բեկոր, Ե-Է դդ. (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2009 թ.)

15 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 181, թ. 23-30: Կից տրվել են նաև յուրաքանչյուր ընտանիքին պատկանող անասունների քանակը, ինչպես նաև հողերի չափը:

Հաջորդը 1180 թ.-ից մեզ հասած գեղաքանդակ արձանագիր խաչքարի ստորին աջ անկյանը հարող բեկորն է, որն այժմ գտնվում է գավթի մեջ.

Ա. խաչքարի բեկոր. ընկած գավթի ներսում.

ՈՒԹ (1180), ...(կանգն)/եցաւ նշ(ան ի բարե)/-խաւս...:

Հրատ. առաջին անգամ:

Վանքամերձ տարածքում է գտնվում նաև 1206 թ. կերտված մեկ այլ արձանագիր խաչքարի բեկոր.

Բ. խաչքարի բեկոր. ընկած գավթի ներսում.

(Ո)/ԾԵ (1206), .../ուն...(ող)/որմի ...:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. ոճական, գեղարվեստական, ինչպես նաև գրչագրական առանձնահատկությունները թույլ են տալիս հարյուրավորը որոշել՝ Ո (600):

Ի վերջո, Սբ. Աստվածածին եկեղեցու հիմնումից 3 տարի ավելի վաղ է թվագրվում գավթի ներսում գտնվող ևս մեկ խաչքար, որին հասցված վնասվածքներից ակնհայտ է, որ ինչ-որ ժամանակ սա հարմարեցված է եղել որպես սեղանի վեմ-քար (կենտրոնական մասում ուղղանկյուն փոսորակ է արվել, իսկ ստորին ելուստավոր հատվածը կոտրել, հավասարեցրել են):

Գ. խաչքար. գավթի ներսում.

Յ(իսու)ս Ք(րիստո)ս, / ի թվի(ն) ՈԾԹ (1210) կանկն/եցաւ խաչս բարէխաւսութ(ի)ւն / Նվարդկան, յիշեցէք ի Ք(րիստո)ս:

Հրատ. առաջին անգամ:



Վանքի հիմնադրումը. ի տարբերություն միջնադարյան հայտնի այլ վանքերի, որոնց վերաբերյալ հաճախ առկա են նաև մատենագրական սկզբնաղբյուրներ, Տեղերի վանքի հիմնադրման և ընթացիկ կառուցապատումների մասին տեղեկություններ քաղում ենք բացառապես իր իսկ որմերին պահպանված վիմագրերից[16]: Նման պարագայում ինքնին

16 Թերևս բացառություն են կազմում հետագայի մի քանի թռուցիկ հիշատակություններ: Զաքարիա Քանաքեռցին, որը, ի թիվս Շիրակ և Արագածոտն գավառներում Զաքարյան իշխանապետների հովանու ներքո կառուցված վանքերի, հիշում է նաև «զՏեղերու վանք»-ը (**Զաքարեայ սարկաւագի** պատմագրութիւն, 1870, Վաղարշապատ, հ. 3, էջ 12): ԺԸ դարում հիշվում է «...Աստուածածնայ անունով մի հոյակապ եկեղեցի՝ Զաքարիա սպասալարի քոյր Մամախաթունի կառուցած» (Դիւան հայոց պատմութեան, հ. Գ, էջ 831), կամ «...բարեպաշտ և Աստուածասէր տիկինն Մամախաթուն, որ էր քոյր Զաքարիայ սպասալարին, բազմօք ծախիւք և զանազան յօրինուածովք շինէ անդ զեկեղեցի գմբէթայարկ յանուն սրբոյ Աստուածածնին, և առնէ վանք հռչակաւոր և կրօնաւորանիստ, և տայ նմա թեմ և վիճակ մինչև ի միջագետս ասորեաց» (Դիւան հայոց պատմութեան, հ. Գ, էջ 832):

Տեղեր. Խաչքարի բեկոր (1206 թ.) և խաչքար (1210 թ.)

հասկանալի է, որ թյուրիմացություններից խուսափելու համար որքան կարևոր է վերծանություններում (մանավանդ տարեթվերի խնդրում) չսխալվելը: Մինչդեռ Տեղերի վանքի հետ տեղի է ունեցել անցանկալին: Այսինքն, մի կողմից որոշ վիմագրերի տարեթվերի ոչ ճիշտ վերծանումները, մյուս կողմից էլ մի շարք վիմագրերի՝ իբրև այլևս անընթեռնելի որակելն ու այդ կերպ աչքաթող անելը, որոնք գոնե կիսով չափ վերծանվում են նույնիսկ մեր օրերում (ինքնին հասկանալի է, որ, օրինակ, 1922 թ. այդ վիմագրերն ավելի ևս դյուրընթեռնելի էին), պատմագիտական զանազան աշխատություններում տեղ գտած որոշակի սխալների կամ ոչ լիարժեք եզրահանգումների պատճառ են դարձել:

Եվ, այսպես, դեռևս 1830-ական թթ. հիմք ընդունելով գավթի արևմտյան մուտքին առկա շինարարական արձանագրությունը, վանքի հիմնադրումը վերագրվել է 1232 թ. «...ետ կառուցանել բարեբաշտ տիկինն Մամա խաթուն՝ ամուսին Վաչէ իշխանի. որոյ շինութեանն արձանագիր դնի ի վերայ արևմտեան դրան գաւթի տաճարին...»[17]:

1232 թվականն անվերապահորեն կառույցի հիմնադրման տարեթիվ է դիտարկում նաև Մխիթար վարդապետ Տեր-Մկրտչյանը, որն ավելի հին թվագրություններով մյուս բոլոր արձանագրությունները համարում է իբր եկեղեցու կառուցման ժամանակ այլևայլ հնավայրերից փոխադրված և կառույցի որմերում ագուցված քարեր. «Մենք կարծում ենք, որ թէ մեծ և թէ փոքր եկեղեցին ժամատան հետ միասին շինել է Մամախաթունը ՈՁԱ հայոց թվին, իսկ շինութեան թուականից առաջ արձանագրութիւն կրող քարերն եկեղեցու վերանորոգութեան ժամանակ տեղափոխուած են այստեղ այլ տեղերից, հաւանականաբար մօտակայ ս. Յովհան եկեղեցու կամ ս. Խաչ վանքի աւերակներից»[18]:

Բազմավաստակ Խաչիկ ծայրագույն վարդապետ Դաղյանն էլ վանքի հիմնադրման տարեթիվ է մատնանշում 1231 թ. «Տեղերու վանքը... շինուած է 1231 թուականի Վաչուտեան ցեղի Մամախաթուն տիկնոջ ձեռնտուութեամբ իբրև շիրիմ կամ դամբարան նոյն ցեղի»[19]:

Այլ տեղում Խ. Դաղյանը դարձյալ մատնանշում է միևնույն տարեթիվը. «Տեղերու վանքը, ինչպէս որ Սաղմոսավանից տեղագրութեան մէջ յիշատակած եմ, շինուած է 1231 թվականին Վաչուտեան ցեղի Մամախաթուն տիկնոջ (ձեռնհասութեամբ) իբրև շիրիմ կամ դամբարան նոյն ցեղի, ուր և թաղուած է Մամախաթուն տիկինն»[20]:

Երախտաշատ Գարեգին կաթողիկոս Հովսեփյանն էլ նշում է. «Տեղերու վանքը (Արագածոտն գաւառում) պէտք է շինուած լինի ՈԿԲ (=1213) թուին, դրան գլխի սրձանագրութեան համեմատ, իսկ 1221 թուին Աղբայրիկ վարդապետը, որ ճարտարապետն է, յայտնում է, թէ „շինեցի զեկեղեցիս եւ զգաւիթս„: Վերջապէս Վաչէ իշխանի ամուսինը, վանքը շինել տուողը, Մամախաթուն ՈՁԱ (=1232) թուից»: Այս բոլորը ցոյց են տալիս, թէ տաճարն ու ժամատունը շինուած են անմիջապէս իրար յետեւից»[21]:

Մերօրյա ուսումնասիրություններից մեկի հեղինակն էլ նշում է, որ եկեղեցին և գավիթը «մեկ-միասնական նախագծով» են կառուցվել[22], իսկ գավթի՝ 1232 թ. կառուցված լինելու մասին ազդարարող արձանագրության կապակցությամբ էլ նկատում է, որ դա վերաբերում է գավթի կրած հորինվածքային ձևափոխությանը, մասնավորապես՝ նրա արևմտյան անկյուններում կանգնած զույգ փոքրիկ եկեղեցիների հավելումին, որոնք իբր 1221 թ. կառուցված գավթի հորինվածքում նախապես մտահղացված չեն եղել, և որոնց հավելման աշխատանքներն ամբողջացել են 1232 թ. «Գավթի ամբողջ ճակատամասը և կտուրի այդ հատվածը քանդվել-վերաշարվել են նոր հորինվածքով. երկու վերասլաց եկեղեցի-զանգակատների միջև կտրվածքով առանձնացվել ու մի քանի շարքով վեր է բարձրացել կենտրոնական ճակտոնը»[23]:

Մեր կողմից քննելով առկա նյութը և մանավանդ վերստուգելով ցարդ ընթերցված և չընթերցված վիմագրերը՝ կարող ենք հայտնել հետևյալը.

ա. Վանքի Սբ. Աստվածածին եկեղեցին անվերապահորեն 1213 թ. ամբողջացված կառույց է: Այս մասին են վկայում պահպանված չորս (եկեղեցու բարավորին, բարավորը երիզող որմնակամարին, թմբուկի հարավային լուսամուտին և գավթի բարավորին ներքուստ) վիմագրերը[24]:

բ. Եկեղեցին և գավիթը մեկ-միասնական նախագծով ոչ միայն չեն կառուցվել, այլև, ինչպես պարզվում է, ի սկզբանե ընդհանրապես գավիթ կառուցելու ծրագիր չի էլ եղել: Ընդ որում, գավթի կառուցումն անմիջապես չէր կարող հետևած լինել եկեղեցու շինարարությանը թեկուզ միայն այն պարզ պատճառով, որ եկեղեցուն կցված գավիթն իր որմնասյուներով մեկընդմիշտ կիսով չափ ծածկել է ավելի վաղ եկեղեցու արևմտյան ճակատին ճար-

17 **Շահխաթունեանց Յ.**, նշվ. աշխ, էջ 68:

18 **Տեր-Մկրտչեան Մ.**, Մի քանի հին արձանագրություններ, Zeitschrift für armenische philologie, Marburg (Hessen), 1904, էջ 46:

19 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 181, թ. 18:

20 Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, գիրք Ը, Մատթէոս Բ Իզմիրլեան, Երեւան, 2001, էջ 594:

21 **Յովսէփեան Գ.**, Խաղբակեանք կամ Պռոշեանք հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 195:

22 **Պետրոսյանց Տ.**, Վաչուտյաններ, Երևան, 2001, էջ 198-200:

23 Նշվ. աշխ., էջ 201:

24 Վերծանությունները տե՛ս ստորև: Ի դեպ, ոչ ուշ, քան 1212 թ. վերաբերող Ամբերդի եկեղեցու արձանագրություններից մեկում ևս հիշվում է Տեղերը, սակայն թերևս ավելի գյուղը, քան համանուն վանքը. «...տուաք... առուին կէսն Տեղերու...» (**Շահխաթունեանց Յ.**, նշվ. աշխ, էջ 71: Նաև՝ **Տեր-Մինասյան Ե.**, Ամբերդաձորի հնությունները և արձանագրությունները, «Էջմիածին», 1961, Ե, էջ 50):

Տեղերի վանքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Թ. Թորամանյանի, 1924 թ.)

տարապետ Աղբայրիկի թողած նվիրատվական արձանագրություններից մեկը, որով և բացահայտվում է գավթի կառուցումն ավելի ուշ հղացված լինելը:

գ. 1221 թ. է վերաբերում ոչ միայն ճարտարապետ Աղբայրիկի՝ գավթի հարավարևելյան սյան խոյակի հյուսիսահայաց երեսին թողած արձանագրությունը, այլև գավթի արևմտյան ճակտոնի նվիրատվական հակիրճ հիշատակագրություններից մեկը, որը ցարդ գիտական շրջանառությունից դուրս է մնացել սխալ վերծանության պատճառով (ըստ էության, համաժամանակյա են նաև վերջինիս շուրջ առանձին խաչաքանդակներին կից փորագրված 6 հիշատակագրությունները ևս): Սրանով փաստվում է, որ գավթի այս հատվածը ևս ոչ թե 1232 թ., այլ հենց 1221 թ. է կառուցվել, ուստի հետևում է նաև, որ գավթի արևմտյան անկյունների վրա կանգնած եկեղեցիները ոչ թե հետագայի հավելումներ են, այլ մաս են կազմում միատեղ հղացված և իրականացված հորինվածքի, իսկ 1232 թ. պարզապես կառույցի ավարտի տարին է, որը, ամենայն հավանականությամբ, կարող էր ընդմիջված լինել քաղաքական կացության, մասնավորապես մոնղոլական արշավանքների պատճառով:

Ճարտարապետություն. վանքի հորինվածքային-ճարտարապետական արժանիքներին առաջինն անդրադարձել է 1816 թ. սեպտեմբերին Տեղեր այցելած Մեսրոպ Թաղիադյանցը. «...եկաք ի Տեղեր, ուր էր վանք հրաշակերտ կառուցեալ յամպածայր բարձրաւանդակ միոջ ձորոյն: Ձև շինուածոց սորա, որպէս և տեսիլ դրիցն՝ ամենևին հանգունատիպ էր Յովհաննավանիցն Կարբւոյ. թէպէտ և ճարտարապետութիւնն առաւել ընտիր, և տեղին՝ ահեղագոյն ևս»[25]:

Փոքր-ինչ ավելի հանգամանալից է 1830-ականներին շարադրվածը. «Միջին տաճարն առանց սեան. և ընդարձակ գաւիթ նորա ի վերայ չորից միաստանի սեանց հանդերձ մատրամբքն են վայելչաշէնք, բարձրակամարք յամրակուռ սրբատաշ քարանց. երեք փոքրիկ կաթուղիկէք են ի նմա՝ մին ի վերայ տաճարին և երկուքն ի վերայ գաւթին. այս երկու կաթուղիկէք ի ներքոյ իւրեանց ունին զերկուս փոքր այլ մատրունս ի միջոցի անդ առաստաղի և տանեացն, և փոքրիկ դրունք նոցա ի վերուստ անտի տանեացն»[26]:

Նշվել է նաև. «Վանքը բաղկացած է մի քառասիւն գաւթից և մի անսիւն կաթողիկէից: Գաւթի հարաւ-արևմտեան և հիւսիս-արևմտեան անկիւնների վերայ բարձրացած են երկու Կաթուղիկէներ, գմբեթներ պատարագի սեղաններով»[27]:

Մեր կողմից ցանկանում ենք նշել, որ Տեղերի վանքի ճարտարապետությունն առանձնահատուկ է ոչ թե զարգացած միջնադարում այնքան լայն տա-

25 **Թաղիադեանց Մ.**, Ճանապարհորդութիւն ի Հայս, հատոր առաջին, Կալկաթա, 1847, էջ 214:

26 **Շահխաթունեանց Յ.**, նշվ. աշխ, էջ 69:

27 Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, նշվ. հատորը, էջ 594:

Տեղերի վանքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2012 թ.)

ռածում գտած և ողջ պատմական Հայաստանի տարածքում բազմաթիվ նմուշներով հանդիպող կենտրոնագմբեթ հորինվածք ունեցող եկեղեցով, որի մեկ օրինակն էլ այս դեպքում վանքի Սբ. Աստվածածին եկեղեցին է, այլ 1221-1232 թթ. ընթացքում կառուցված գավթով, որը, համահորինվածք (քառասյուն) գավիթների շարքին պատկանելով հանդերձ, եզակիորեն առանձնանում է (նախօրինակն է նույն ճարտարապետի երևակայության արգասիքը՝ Եղիպատրուշի վանքը) տանիքի արևմտյան զույգ անկյուններում վեր խոյացած դարձյալ կենտրոնագմբեթ հորինվածք ունեցող փոքրիկ եկեղեցիների առկայությամբ:

Անշուշտ, զույգ գմբեթներով հորինվածքները, իրենց սահմանափակ տարածման իրողությամբ հանդերձ, այնուամենայնիվ, խորթ չեն զարգացած միջնադարի հայ ճարտարապետությանը: Դրանց զուգահեռներն առկա են, օրինակ, Հռոմոսի և Նոր Վարագ վանքերում, սակայն դրանցում վերջիններս կից են առանձին կանգնած կառույցներին: Տեղերից բացի՝ միայն Եղիպատրուշ գյուղի վանքի գավթում է, որ եկեղեցիները վեր են խոյանում ուղղակի շինության, տվյալ դեպքում՝ գավթի վրա:

Տեղերի վանքը ԺԴ-ԺԷ դարերում. ճիշտ է, թվագրված վիմագրերի՝ Տեղերում պահպանված նմուշները սահմանափակվում են ԺԳ դարով, սա-



Տեղերի վանքի առաջին և երկրորդ հարկերի հատակագծերը (չափ.՝ Ա. Հակոբյանի, 2013 թ.)





Տեղերի վանքի եկեղեցին հարավից և գավթի հարավարևմտյան հատվածը (լուս.՝ Թ. Թորամանյանի, 1924 թ.), վանքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2013 թ.)





Տեղերի վանքը հարավ-արևմուտքից (լուս.՝ Ա. Հակոբյանի և Ս. Կարապետյանի, 2011, 2013 թթ.)

Հատված Տեղերի վանքի Սբ. Աստվածածին եկեղեցու ներքին ծավալներից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2012 թ.)



Հատվածներ Տեղերի վանքի Սբ. Աստվածածին եկեղեցու ներքին ծավալներից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2012 թ.)

Հատված Տեղերի վանքի գավթի ներքին ծավալներից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2012 թ.)



Հատվածներ Տեղերի վանքի գավթի ներքին ծավալներից (լուս.՝ Ս. Կարապետյանի, 2012 թ.)

կայն կասկածից վեր է, որ մեծաթիվ անթվակիր նվիրատվական արձանագրությունների մի մասը փորագրվել է արդեն ԺԴ դարում:

Ավելի հազվագյուտ են ԺԵ և հետագա դարերի հիշատակագրությունները (մեկը 1494 թ.-ից է, տե՛ս իր տեղում): Այս շրջանից առկա են նաև մատենագրական կցկտուր հիշատակություններ:

Մասնավորապես՝ 1431 թ. սովի ժամանակ հիշվում է «...Զաքարէ աբեղայն Տեղերացի»-ն[28]:

1599 թ. հիշվում է վանահայր Ղուկասը. «Թուին ՌԽԸ. եղեւ հայր Ղուկաս Յոհաննու վանից, եւ Տեղերոյ եւ Վժանայ: Սա գրեաց աւետարան մի, եւ եդ յիշատակ ի դուռն Յոհաննու վանից, եւ գոյ այժմ ի գիւղն Փարպի: Զայս ուսաք մեք ի նոյն աւետարանէ»[29]:

ԺԷ դարում հիշվում է ոմն «...տէր Կիրակոս, որ եղեւ եպիսկոպոս, եւ նստաւ առաջնորդ Տեղերոյ...»[30]: Ի դեպ, Կիրակոս Տեղերավանքեցին հիշվում է նաև 1677 թ.[31]:

Կացությունը ԺԸ-ԺԹ դարերում. ԺԸ դարի 30-ական թվականներին, ի թիվս բազմաթիվ այլ վանքերի, Տեղերը հիշվում է Երևանի խանին հարկատու հոգևոր կենտրոնների թվում[32]:

Հայտնի է, որ 1766 թ. 11 օրվա ընթացքում, ի շարս Արագածոտնի այլևայլ վանքերի, Տեղեր է այցելում Սիմեոն կաթողիկոսը. «...ի սուրբ Գէորգ, ի Յոհանավան, ի Սաղմոսավան, ի սուրբ Սարգիս, ի սուրբ Աստուածածին Տեղերու և յԱրտավզիկ կոչեցեալսն...»[33]:

Վերջինս, ազդված վանքի անմխիթար վիճակից, փորձում է որոշ բարենորոգումներ իրականացնել. «...ոչ յատկապէս թեմ ունի արդիւնաբեր և ոչ վիճակ՝ զի նոքօք զպակասութիւնսն իւր լցուցէ, այսր աղագաւ կարի յաղքատութեան և ի չքաւորութեան և ի պարտուց միջի կայ յամենայն կողմանց սուրբ վանքն այն, և մանաւանդ վասն բազմաժամանակեայ գոլոյն՝ և ի շարժմանէ՝ եկեղեցին ևս խախտեցեալ է և շրջակայ պարիսպքն և խուցք՝ և այլ շինուածքն՝ փլուզեցեալք և քանդեցեալք կան, և այսպէս իբր ամայի և անտիրոջ և յոյժ անշքացեալ և խանգարեցեալ է սուրբ ուխտն այն: Զոր տեսեալ մեր՝ ի սիրտ և ի հոգի մորմոքեալ ցաւէաք միշտ, ուստի՝ զհարկս եդաք ի վերայ սիրելի և հոգևոր որդւոյն մերոյ՝ և հարազատի զաւակի սրբոյ աթոռոյս տեառն Անանիա յոգնաշատ վարդապետիդ և արժանապատիւ եպիսկոպոսիդ՝ զոր և առաջնորդ կարգեցաք այնմ հռչակաւորի և մեծի աթոռոյ և վանիցն, յուսադրելով զնա՝ նախ աստուծով և ապա ձեօք, զի գնացեալ զայն աստուածային տունն սուրբ նորոգեալ շինեսցէ՝ և պայծառացուսցէ ի փառս Քրիստոսի՝ և ի սէր ամէնօրհնեալ սուրբ Աստուածածնին, և ի պարծանս ազգիս հայոց»[34]:

Այնուամենայնիվ, երևում է, որ կաթողիկոսի ծրագրերը մնում են անկատար, քանի որ 1830-ական թվականներին վանքը թեև կանգուն էր, սակայն կրում էր քայքայվածության ակնառու նշաններ. «Եկեղեցին ի տեղիս տեղիս ունի աւերմունս քարանց, և պատառուածս ի գետնաշարժից, այլ մեծ մասամբ կայ յամբողջութեան...» և մնում էր «...այնպէս լքեալ և ամայի...»[35]:

Կացությունը Ի դարի սկզբներին. 1910 թ. օգոստոսի 15-ին վանքի անմխիթար վիճակի առթիվ հերթական ահազանգն է հնչեցնում Հ. Հովհաննիսյանը. «...Դղրդը ...գիւղի հնադարեան հոյակապ տաճարը վերջին տարիների ընթացքում աւելի ևս քայքայուել և իսպառ աւերման մօտ է՝ շնորհիւ տգէտ ժողովրդեան և մասնաւորապէս ապիկար քահանայի աններելի անհոգութեան: Տաճարի կտուրը և պատերը ծածկուած են առատ բուսականութեամբ, որ հետզհետէ յիւր աւերիչ ազդեցութիւնը պիտի գործէ անշուշտ: Մուտքի աջակողմից պատի երեսի սրբատաշ քարերը գոգ են տուել և մօտ են փլչելու: Մեծ գմբէթի մնացորդը նոյնպէս երևի երկար պիտի չմնայ իւր տեղումն ևն: ...լսեցի, որ այդ պատուական յիշատակարանի նորոգութեան համար մի քանի հարիւր ռուբլի գումար կայ, որ գտնուում է մասնաւոր ձեռքերում: ...թոյլ չպիտի տաք՝ եկեղեցու գումարը մասնաւոր անհատների ձեռքում կորչի, իսկ մեր միջնադարեան ճարտարապետութեան գեղեցիկ արտադրութիւններից մէկը, Ս. Էջմիածնի աչքի առաջ, տգիտութեան, անհոգութեան ու անբարեխղճութեան երեսից աւերակների մի կոյտ դառնայ»[36]:

Նույն թվականին Խաչիկ վարդապետ Դադյանի՝ Մատթեոս Բ կաթողիկոսին հղած նամակից պարզվում է, որ Տեղերի ծխական քահանա և վանահայր Գարեգին Տեր-Ավետիսյանցի տևական անտարբերության հետևանքով թե՛ բուն կառույցը և թե՛ վանքի տնտեսությունը հայտնվել էին քայքայված դրության մեջ. «Քննութիւնից երևաց որ գիւղի երեսփոխների և ժողովրդականաց տգիտութեանց շնորհիւ և քսաներկու տարուայ քահանայութեան ապիկարութեան պատճառով Տեղերու Սուրբ Աստուածածնայ վանքի դրամը կորցնելու վտանգի մէջ է: Վանուց դրամները ոչ միայն տեղերցի ժո-

28 **Թովմա Մեծոփեցի**, Պատմագրություն, Երևան, 1999, էջ 161:

29 **Զաքարեայ սարկաւագի** պատմագրութիւն, նշվ. հատորը, էջ 32: Վկայությունից օգտվելով՝ Հ. Շահխաթունյանցը նշել է. «Ղուկաս ի թուին ՌԽԸ, յամի 1599. միանգամայն և առաջնորդ Տեղերոյ վանաց, սա տայ գրել զաւետարան մի» (նշվ. աշխ, էջ 72):

30 **Զաքարեայ սարկաւագի** պատմագրութիւն, նշվ. հատորը, էջ 8-9:

31 Մանր ժամանակագրություններ, հ. 1, Երևան, 1951, էջ 310:

32 Մատենադարանի պարսկերեն հրովարտակներ, պրակ 4, Երևան, 2008, էջ 36:

33 Դիւան հայոց պատմութեան, հ. Գ, էջ 456:

34 Նշվ. աշխ., էջ 832-833:

35 **Շահխաթունեանց Յ.**, նշվ. աշխ, էջ 69:

36 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 181, թ. 17:

ղովրդեան է փոխ տուած, այլև թալիշցի և բիւրականցի մարդկանց: Վանքը ներկայումս ունի 489 ռ. 40 կ. գումար զանազան մարդկանց վերայ սկսած 1886 թվականից մինչև 1905 թուականը՝ օրինական և ոչ օրինական պարտամուրհակներով բաժանած: Եթէ ապիկար քահանան տարեկան մի քանի քար ամրացնէր տաճարի ընկած քարերից, համարեա թէ կամբողջանար հնադարեան տաճարը: Մինչդեռ եկեղեցական գումարի մի մասը իւր եղբարց շահեցողութեան համար է տրուած»[37]:

Ինչ վերաբերում է ստեղծված իրավիճակից վանքը դուրս բերելու համար անհրաժեշտ քայլերին, ապա Խ. Դաղյանն առաջարկում է. «...թէ տաճարի մեծ Կաթուղիկէ գլխի սալերը և շինութեանց քարերի մի մասը թափթփուած են: Թաղերի կտուրների կրկնակի ծածկերը խորտակուած և խոնարհուելու վտանգի առաջ կանգնած են: Գաւթի կտուրը քսանհինգ տարի առաջ սալած են. մասնաւոր նորոգութեամբ կարելի կլինի աւերածութեանց առաջն առնել: Տաճարի արևելեան պատը գլխից մինչև տակը ճեղքուած ունի. հարաւային խորանի դրսի պատի քարերը թափած, կտրի ծածկի թաղի կէսը փլած է: Իսկ արևմտեան պատը ուռուցքներ ունի տուած: Տաճարի ու գաւթի կտուրը առատ բուսականութեամբ ու մացառով ծածկուած են: Վանուց աշտարակաւոր պարիսպը, որը շինուած է 1428 թուին բիւրականցի Սարգիս վարդապետի ձեռամբ, այժմ քայքայուած է. միայն հարաւարևելեան աշտարակի կէսն է մնում կիսափուլ դրութեամբ. պարսպի հիւսիս արևելեան աշտարակի քակողը ինքը գիւղի Գարեգին քահանայն է եղել, որի տեղը բնակարան ունի շինած նոյնպէս խարխուլ շինութեամբ: Պարսպի շրջապատի մէջ ապրում են մօտ 23 տուն հայեր, իւրաքանչիւր տունը երկուսից չորս ծածկերով. որոնց անհրաժեշտ է հեռացնել վանքի շրջապատից: Սոյն տների պատերի մէջ երևում են վանքի թափթփուած սրբատաշ քարերը և արձանագրութիւնները: Վանքի նորոգութեան համար ամենից առաջ հարկաւոր է յիշեալ բնակարանները հեռացնելու, շինութեանց պատերի միջից հանելով վանուց քարերը և իրանց տեղը դնելով, որով կարելի կլինի մի քանի հարիւր ռուբլով նորոգել խախտած տեղերը: Իսկ տաճարի կտուրը անհրաժեշտ է թիթեղով ծածկել որպէսզի վերահաս կործանումի առաջ առնուի...»[38]:

Ի դեպ, դեռևս 1910 թ. օգոստոսի 28-ին Խաչիկ վարդապետ Դաղյանը լավատեսորեն հայտնում է Մատթեոս Բ կաթողիկոսին, որ «...կարող կլինեմ Սաղմոսավանից Ս. Սիօնը պայծառացնել, Տեղերու Ս. Աստուածածինը կենդանացնել, Ուշւոյ Ս. Սարգսի, Յովհաննուվանից և Աստուածընկալի հրաշակերտ տաճարների աւերակները յափշտակութիւնից ազատել և պահպանել» ու շեշտում, որ «Մեր նախնեաց յիշատակները, ճարտարապետական կերտուածները պահպանելը հաւասարազօր է նորերը շինելու...»[39]:

Արդեն 1911 թ. օգոստոսի 4-ին տեղերցի Իսրայել Գրիգորյանի նվիրատվության շնորհիվ Խաչիկ վարդապետ Դաղյանին հաջողվում է մի փոքր բարվոքել վանքի տնտեսական դրությունը. «...ի գիւղն Տեղեր Փարպիի հասարակութեան Էջմիածնի գաւառի տեղերցի Իսրայէլ Գրիգորեանը միաբանելով Տեղերու Սբ. Աստուածածնի վանուց և կտակելով իւր ունեցած անշարժ կալուածքը յիշեալ վանքին, իւր սեփական բնակարանը վաճառելով ձեռամբ տ. Խաչիկ ծ. վարդապետին վաքսուն ռուբլով: Իսրայէլ Գրիգորեանի բնակարանը փոխարինելով տեղերցի Գրիգոր Մարտիրոսեանի բնակարանի հետ, որը մօտ է սբ. Աստուածածնի վանքին, ոչ ոք իրաւունք չունենայ յիշեալ բնակարանի մասին վէճ բանալու թէ ազգական, թէ բարեկամ և թէ օտար, իսկ Գրիգոր Մարտիրոսեան Տէր-Աւետիսեանը պիտի բնակէ յիշեալ բնակարանում որդոց որդի»[40]:

Կացությունը խորհրդային տարիներին. 1928 թ. հիշվում է Տեղեր գյուղի ծխատեր Եղիշե քահանա Վարդանյանը, որի՝ եկեղեցում ավետարան կարդալը և գյուղի 4 երիտասարդի գրագիտություն սովորեցնելը որակվում են որպես հակապետական գործ: Այդ պատճառով գյուղխորհրդի նախագահ Գալուստ Գևորգյանի պնդմամբ և Աշտարակի ժողդատարանի որոշմամբ քահանան դատապարտվում է երեք ամիս պարտադիր աշխատանքի: Հետաքրքրական է այս առթիվ պատժի ավարտին քահանայի հայտարարությունը. «...այժմ ես ազատ եմ և կատարում եմ քահանայական պաշտոնս, քանի որ պարտադիր աշխատանքս՝ Աշտարակի շրջկոմի անասունների գոմը սալահատակել, վերջացրել եմ...»[41]:

Մինչ այս, մինչ այն վանքը շարունակվում էր քայքայվել: Ընդ որում, կացությունը բարդացրել էր նաև 1948 թ. տեղի ունեցած երկրաշարժը, որով և օրավուր աճում էր գոնե մասնակի վերականգնման անհրաժեշտությունը: Այստեղ, ի պատիվ խորհրդային իշխանությունների, հարկ է նշել, որ հանրապետության համար ամենադժվարին մի ժամանակաշրջանում՝ 1950-ական թթ. սկզբներին, կառավարությունը, այնուամենայնիվ, ձեռնամուխ է լինում հնամենի վանքի վերականգնման աշխատանքներին, որոնք և ամբողջանում են 1970-ականներին իրականացված 2-րդ փուլի շնորհիվ. «Կա-

37 Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, նշվ. հատորը, էջ 594: Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 181, թ. 32:

38 Վավերագրեր հայ եկեղեցու պատմութեան, նշվ. հատորը, էջ 594-595: Ի դեպ, կից ներկայացվել է նաև վանքի պարտամուրհակների ցուցակը (թ. 20): Տե՛ս նաև ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 181, թ. 18-19; գ. 226, թ. 1-2:

39 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 181, թ. 19 և շրջ.:

40 ՀԱԴ, ֆ. 319, ց. 1, գ. 181, թ. 31:

41 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության (1921-1938 թթ.), հ. Ա, Երևան, 1994, էջ 166:

ռույցը խիստ տուժել էր 1948 թ. երկրաշարժի պահին, երբ նրանում առաջացել են բազմաթիվ ճաքեր, ու ընկել են պատերի ու գմբեթների երեսապատ բեկորներ: 1950-1953 թթ. ընթացքում կատարվեց հուշարձանի լրիվ նորոգումը, ընդհուպ մինչև գմբեթների թմբուկների վերաշար ու ծածկասալերի տեղադրումը, իսկ վեղարները վերարտադրվեցին թիթեղով: Նորոգող ճարտարապետ Հ. Հակոբյան: 1975 թվից սկսվեց հուշարձանի նոր վերանորոգումը, և այս անգամ հիմնովին վերականգնվեցին ծածկերը, վեղարները վերաշարվեցին, ընդ որում արդեն քարից: Հուշարձանի կոնստրուկտիվ հանգույցներում օգտագործվեց երկաթբետոն: Վերանորոգող ճարտարապետ Ա. Ավետիսյան: Քարագործ վարպետների բրիգադավար Մ. Գասպարյան»[42]:

Կացությունը մեր օրերում. հատկապես ծածկերի խնդրում արդեն ի հայտ են եկել որոշակի քայքայված հատվածներ, որտեղ խախտվել-տեղաշարժվել են որոշ թվով ծածկասալեր: Ակնհայտ է, որ առաջ եկած թերություններն առայժմ կարելի է նյութական ամենահամեստ միջոցների ներդրմամբ չեզոքացնել, մինչդեռ ևս մի քանի տարի հապաղելու պարագայում խնդիրն անխուսափելիորեն կբախվի ծախսաշատ աշխատանքների:

Վիմագրեր. Տեղերի վանքի վիմագրական ժառանգության ուսումնասիրության խնդիրը մասնագիտական շրջանակների ուշադրությունը, ի դեմս Հովհաննես Շահխաթունյանցի, գրավել է դեռևս 1830-ական թթ., որը նշել է «...մեծ մասամբ եղծեալ արձանագրութեանց...»[43] առկայության մասին, բայց ընդօրինակել և հրատարակել է միայն մեկը, որն էլ վերահրատարակել է Ղ. Ալիշանը[44]:

1904 թ. 6 վիմագիր է ներկայացրել Մխիթար վարդապետ Տեր-Մկրտչյանը (դրանցից 5-ը՝ առաջին անգամ), սակայն միաժամանակ նշել, որ «...Տեղերու մեծ և փոքր եկեղեցիների պատերի վրայ կան բազմաթիւ դեռևս չհրատարակված արձանագրութիւններ...»[45]:

Արդեն 1922 թ. սեպտեմբերի 27-28-ին Տեղերի վանքում վիմագրերի ուսումնասիրության ուղղությամբ առավել համակարգված աշխատանք են իրականացնում Ե. Տեր-Մինասյանն ու Գարեգին եպիս. Հովսեփյանը: Երկու օրվա ընթացքում վաստակաշատ հայագետներին հաջողվում է տեղում ընդօրինակել և վերծանել ամբողջական կամ թերի պահպանված 35 վիմագիր (դրանցից 28-ը՝ առաջին անգամ), սակայն այդ նյութերը լույս են տեսնում գրեթե չորս տասնամյակ անց միայն[46]:

Ստորև ներկայացնում ենք 57 միավոր արձանագրություն (22-ը՝ առաջին անգամ), որոնք նախապես տեղում քննվել են 2003 թ. (Էմմա Աբրահամյանի մասնակցությամբ) և ամբողջացվել 2011-2013 թթ.:

Դ. արձանագրություն. թմբուկի հարավային լուսամուտին կից, 1 տող.



Արձանագրություն Դ

Ի թվ(ին) ՈԿ[Բ] (1213):

Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53: **Բարխուդարյան Ս.**, Միջնադարյան հայ քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 52:

Ծանոթ. հարկ է նշել, որ արդեն 1920-ական թթ. սկզբներին արված լուսանկարներում թմբուկի այն մասը, որտեղ ներկայումս տեղադրված է արձանագիր քարը, արդեն թափուր էր: Ենթադրվում է, որ գոյություն է ունեցել նաև թվականի վերջնամասը, թերևս միավորի ցուցիչ Բ-ն կրող կից մի քար ևս, որն այդպես էլ չի գտնվել:

Ե. արձանագրություն. եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի կամարին, 2 տող.

Ի թ(ին) ՈԿԲ (1213), ի ժամանակս ...ա(ստուա)ծասէր բարեպաշտ եղբարց Շահնշահ Զաքա[ր]էի եւ Ի]ան(է)ի շինեցաւ Ս(ուր)ք Ա(ստուա)ծածինս | ի ձեռն ա(ստուա)ծասէր ...ր մեծի իշխանին Աբուսիրա ... ունին, որ մեծայուս:

Հրատ. **Տեր-Մինասյան Ե.**, նշվ. հոդվ., էջ 51:

Ծանոթ. լրացվել են նախկինում չընթերցված որոշ բառեր և բառամասեր: Աբուսիր իշխանը Մամախաթունի հայրն է, որ Ապուսեհր ձևով հիշվում է նաև Հոռոմոսի վանքում: Տ. Պետրոսյանցը վերջինիս նույնացնում է իշխան Հասանի հետ (**Պետրոսյանց Տ.**, նշվ. աշխ., էջ 313):

Զ. արձանագրություն. եկեղեցու բարավորին՝ գավթի մեջ, 14 տող.

Ի ՈԿԲ (1213) թվ(ին) | ... | ...ի|ռում Վաչէի, բարեպաշտ իշխանի, որ էր կարգ|ել հրամանաւ Զաքարէի վերակացու գաւառի, | ամէ ամ իմ յամենայն

42 **Հովհաննիսյան Կ.**, Ճարտարապետական հուշարձանների վերանորոգումը Սովետական Հայաստանում, Երևան, 1978, էջ 248:

43 **Շահխաթունեանց Յ.**, նշվ. աշխ, էջ 70:

44 **Ալիշան Ղ.**, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 147:

45 **Տեր-Մկրտչեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 45-47:

46 **Տեր-Մինասյան Ե.**, նշվ. հոդվ., էջ 51-54:





Արձանագրություններ Ե և Զ

գործս տերունի եւ սահ/մանեցին սպասաւորք ս(ուր)ք ուխտիս յիշատակ նո/ցա մատուցանել պատարագ զԾառզարդարն Զաքա/ռէի զամէն եկեղեցիքս ..., Վարդավառն շաբաթն եւ | զԿիւրակէի Վաչէի զամէն եկեղեցիքս եւ յամենայ/ն շաբաթ զ... Մամախաթունին առնել յաւա/գ խորանին ..., յիշատակի հաստատէ շնորհիւն | Ք(րիստոս)ի, իսկ որք ... պարտապան են առաջի ա(ստուծո)յ մ/երում:

Հրատ. **Տեր-Մինասյան Ե.**, նշվ. հոդվ., էջ 51: **Պետրոսյանց Տ.**, նշվ. աշխ., էջ 253:

Ծանոթ. լրացվել և շտկվել են նախկինում չընթերցված կամ սխալ ընթերցված որոշ բառեր և բառամասեր:

Է. արձանագրություն. գավթի բարավորին, ներքուստ, 9 տող.

Թո(ւին) :ՈԿԷ: (1218), | շնորհիւն ա(ստուծո)յ ես՝ Վաչէ, | եւ ամուսին իմ՝ Մամախաթուն, | շինեցաք

զեկեղեց(իս) եւ զգաւիթս եւ / միաբանութե(ան) ...բեանց կամաւ, / որ ոչ եգի առնե ... զոչխար ոչ պա/հէզ եւ հայրն ...ա :Բ: (2) տրեխ հա/ստատէ կամ ... որք խափանեն, նզ/ովեսցին (ի ՅԺԸ հայ)րապետացն, ամեն:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. վիմագիրը նախկինում նկատվել, սակայն չի վերծանվել. «Տաճարի դռան կամարի գլխին կա մի մեծ արձանագրություն սպիտակ ֆոնի վրա սև ներկով, ութ երկար տողից, որը բոլորովին եղծված է և չի կարդացվում» (**Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 54): Վիմագրի կենտրոնական մասն այն աստիճան է եղծված, որ տառահետքեր իսկ չեն նշմարվում: Թվականի միավորը կարող է լինել նաև Ը, որով կունենանք 1209 թ.:

Ը. արձանագրություն. եկեղեցու արևմտյան պատին՝ գավթի մեջ, 6 տող.

Ես՝ Աղբայր(իկ)..., / այգին զԱղբին ...(տաւ)/նի Ս(ուր)ք Ա(ստուա)ծածին, ս(պասաւո)/ղքս հաստատ(եցին ի տաւնի) ... /մ Համբարձման ... / մեղացս տէր ...:

Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53:

Ծանոթ. արձանագրությունը փորագրված է եղել 1213-1221 թթ., քանի որ նրա տողերի աջ հատվածն ամբողջ երկարությամբ փակվել-ծածկվել է գավթի կառուցմամբ (1221-1232 թթ.):

Թ. արձանագրություն. եկեղեցու արևմտյան պատին՝ գավթի մեջ՝ բարավորի կամարից վեր, 7 տող.

... Շահնշահի, ես՝ Քուրդ որդի Վաչէ, ... / ...ստր Մարծպանա եւ Մամքանա կրկին հաստ(ատեցաք) ... / ...ցին եւ մայր մեր Մամախաթուն տվաք զ... / ... / ...եցին ի տարոջն Ի (20) աւր ... ինձ՝ Քրդի... / ...կենդանի ենք զ:Ժ: (10) Վաչէին եւ զԺ (10) Մարծպանա, / ...յետ էլից մերոց եղիցի ի տաւնի Անդոնի սկսանին եւ ան/պակաս առնէն, ով խափանէ ..., կատա(ղիչքն աւրհնին) ա(ստուծո)յ, ամէն:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. տարօրինակ է, սակայն մոտավորապես կիսով չափ այսօր էլ ընթերցվող սույն վիմագիրը նախկին բոլոր հետազոտողներն էլ համարել են իսպառ եղծված ու շրջանցել այն: Ժամանակը՝ 1213-1221 թթ.:

Ժ. արձանագրություն. եկեղեցու հարավային պատին, ներքուստ, 6 տող.

Ի նաւակատեց ս(ուր)ք Տիր/ամաւրն մատուցանի / պատարագ ամենայն խ/որանս Վախախին եւ մաւր՝ / Մամախաթունին՝ շինո/ղի եկեղեցոյս:

Հրատ. **Տեր-Մկրտչեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 46: **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53:

Ծանոթ. հավանաբար վերաբերում է 1213 թ.: Համենայն դեպս, փորագրվել է Մամախաթունի կենդանության օրոք (մինչև 1232 թ.):

ԺԱ. արձանագրություն. գավթի հարավարևելյան սյան խոյակի հյուսիսահայաց երեսին, 6 տող.

Ի թիւ ՈՀ (1221), ես՝ Աղբայրիկ վարդպ/ետ, շինեցի զեկեղեցիս եւ / զգաւիթս եւ միաբանեցա ար/դեամբ, եւ սպասաւորքս հա/ստատեցին :Բ: (2) աւր ժամ ինձ / Ս(ուր)ք Խաչին, որ խափա(նէ), դատ(ի) յա(ստուծո)յ:

Հրատ. **Տեր-Մկրտչեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 46: **Տեր-Մինասյան Ե.**, նշվ. հոդվ., էջ 51-52: **Քարխուդարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 54:

Ծանոթ. Տեր-Մկրտչյանի մոտ թերի են վերջին երկու տողերը:





Արձանագրություններ Թ, ժ, ժԱ









ԺԲ. արձանագրություն. գավթի արևմտյան ճակատին, 3 տող.

ՈՀ (1221), զԱբրահամ | բազմամեղ յ|ի(շեցէք):

Հրատ. **Տեր-Մինասյան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53:

Ծանոթ. որպես թվական՝ զույգ կետերով առանձնացված ՈՀ տառերը հիատարակիչը սխալմամբ դիտարկել է իբրև ձայնարկություն: Ի դեպ, այս և հարակից վիմագրերի գրչագրական և խաչաքանդակների ոճական-գեղարվեստական առանձնահատկությունները ցույց են տալիս, որ նվիրատվական այս բոլոր արձանագրությունները կա՛մ միաժամանակ են փորագրվել (1221 թ.), կա՛մ միմյանց շատ մոտ ժամանակահատվածում: Համենայն դեպս, այս նվիրատուների գործունեությունն առնչվում է գավթի շինարարության հետ, ուստի և փորագրվել են մինչև 1232 թ.:

ԺԳ. արձանագրություն. գավթի արևմտյան ճակատին, 2 տող.

զԱռաք|ելն յ(ի)շեցէք:

Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53:

Ծանոթ. նախորդի հետ դիտարկել են իբրև մեկ վիմագիր:

ԺԴ. արձանագրություն. գավթի արևմտյան ճակատին, 1 տող.

Սիմէոն:

Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53:

ԺԵ. արձանագրություն. գավթի արևմտյան ճակատին, 1 տող.

զԹուշէր յի(շեցէք):

Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53:

ԺԶ. արձանագրություն. գավթի արևմտյան ճակատին, 1 տող.
զՄարիամ յի(շեցէք):
Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53:

ԺԷ. արձանագրություն. գավթի արևմտյան ճակատին, 1 տող.
զՄխիթար:
Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53:

ԺԸ. արձանագրություն. գավթի արևմտյան ճակատին, 3 տող.
Ա(ստուա)ծ ող/որմի Ծաղ/կանն:
Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53:

ԺԹ. խաչքարի պատվանդան. վանքից հարավ-արևմուտք՝ ավերակ եկեղեցու ներսում կանգնեցված խաչքարի պատվանդանի արևմտահայաց երեսին, 6 տող.

Կամաւն ա(ստուծո)յ ես՝ Վախախ/ս, զջուրս քերի եւ զ/խաչս կանկնեցի, որք / երկիրպագանէք, յա/դաւթս յիշեցէք ի Ք(րիստո)ս, / :ՌՀ: (1221):

Հրատ. **Տեր-Մինասյան Ե.**, նշվ. հոդվ., էջ 54:

Ծանոթ. հրատարակիչը տարեթիվը ցույց է տվել «ՌԿ» և նշել, որ «Կ-ի մի մասը ջարդված է, միավոր էլ չի երևում»: Վախախը Աբուսիրի (Ապուսեհր) կինն է և Մամախաթունի մայրը:



Ի. արձանագրություն. գավթի բարավորին, արտաքուստ, 9 տող.

ՌՁԱ (1232): / Շնորհիւն ա(ստուծո)յ ես՝ Մա/մախաթունս, շինեցի զեկեղեց/իքս զմեծ եւ զփոքր եւ զժամատունս յի/շատակ ինձ եւ առն իմոյ՝ Վաչէի,



իսկ բնակիչք / ս(ուր)ք ուխտիս հաստատեցին մե[զ] ի տարին պատարագ, ի / տաւնի Վարագա Ս(ուր)ք Խաչին զ[ա]մենայն էկեղեցիքս / մատաղով եւ սիրով, իսկ որ զգրեալս խափանէ, նայ / տայ պատասխան ի առաջի Յ(իսուս)ի Ք(րիստոս)ի: Մխիթար գրիչ:

Հրատ. **Շահխաթունեանց Յ.**, նշվ. աշխ., էջ 68-69: **Ալիշան Ղ.**, նշվ. աշխ., էջ 147: **Տեր-Մինասյան Ե.**, նշվ. հոդվ., էջ 52-53: **Պետրոսյանց Տ.**, նշվ. աշխ., էջ 200, 256:

ԻԱ. արձանագրություն. գավթի հարավային պատին, ներքուստ, 6 տող.

Ի թ(ուին) ՌՁԱ (1232), ես՝ Խոցադեղս, և Թ/{ղ}ագո(ւ)հի միայբանեցաք Ս(ուր)ք / Ա(ստուա)-



ծածնիս և տուաք ...ա/... | ... (պատար)ագ ի | տաւ-նին ...աւղոսի:

Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 52:

ԻԲ. արձանագրություն. գավթի արևելյան ճակատին՝ հարավային անկյան մոտ, արտաքուստ, 7 տող.

ՈՁԲ (1233), շնորհիւն Ք(րիստո)սի ես՝ Խնծո-րիկս, միաբ/անեցա ս(ուր)ք ուխտիս Տեղերու եւ | ե-տու յառաջ զիմ այգին ի | Թամիր եւ յետ իմ մա-

հու/ան այլ զինչ լինի, եւ սոքա ե/տուն ի տարին :Բ: (2) աւր պատարագ | :Ա: (1) Խնծորկնա, :Ա: (1) Բախտաւին, ով խա(փա)նէ:

Հրատ. **Տեր-Սկրտչեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 45: **Տեր-Մինասյան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53:

Ծանոթ. հրատարակիչները սխալ են վերծանել տարեթիվը, այսինքն՝ ՈՁԲ (1233)-ի փոխարեն ընթերցել են ՈԿԲ (1213): Տեր-Սկրտչյանի մոտ թերի են նաև վերջին երկու տողերը:

ԻԳ. արձանագրություն. գավթի հյուսիսային պատին՝ լուսամուտից արևմուտք, ներքուստ, 9 տող.

ՈՁԳ (1234), | ողորմութեամբն ա(ստուծո)յ ես՝ Շառս, միաբանե/ցա սուրբ ուխտիս եւ ետու սակաւ ընծա ե/ւ ի սոքա ընկալան իբրեւ զմեծ եւ ետուն | :Բ: (2) աւր պատարագ ի տաւնի սուրբ Գրիգորի, | որ ի պահան :Ա: (1) Շնահաւորկանն, :Ա: (1) Քե/միահ, որ խափանէ մեր խղճիս տէր է, | զՔ(րիստո)ս... | յի-շ(եցէք):

Հրատ. **Տեր-Մինասյան Ե.**, նշվ. հոդվ., էջ 52:

Ծանոթ. հրատարակության մեջ «պահան»-ի փոխարեն՝ «պահսն», իսկ շարունակությունը համարել են անընթեռնելի:





ԻԴ. արձանագրություն. եկեղեցու արևմտյան պատին՝ գավթի մեջ, 6 տող.

Ի թո(ւին) ՉԻԳ (1274), ես՝ Շիրազարս, եւ ամուսին Աղչայս եւ | Սթավիկս, որդիաք մերաւք միաբանեցաք սրբոցս եւ տվաք զմեր | հոգո բաժինս Ռ (1000) սպ(իտակ) :Լ: (30) ոչխ(ար), :Ա: (1) կանթեղն, :Ա: (1) նափորտ, եւ մեզ խոստացան | ի յամին :Ե: (5) աւր պատարագ ի հոգոյն գալ(ստեան) սկսանին եւ անպակաս արնեն, որչափ | կենդանի ենք պարոնին արնեն, ինչ մեռանինք զմեր աւրն մեզ արնեն, | կատարիչք գրոյս աւրհնին յա(ստուծո)յ, ամէն: Շահ:

Հրատ. **Տեր-Սկրտչեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 46-47: **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 51:

Ծանոթ. *«արնեն, ինչ մեռանինք»*-ի փոխարեն Տեր-Սկրտչյանն ունի *«(՞) ամենեւին (՞) զմեռանինք»*, իսկ *«գալ(ստեան) սկսանին»*-ի փոխարեն Տեր-Մինասյանի և Գ. Հովսեփյանի համատեղ վերծանության մեջ՝ *«գալստենին (՞)»*:

ԻԵ. արձանագրություն. եկեղեցու արևմտյան պատին՝ գավթի մեջ, 6 տող.

Շնորհիւ եւ ողոմութ(եամ)քն ա(ստուծո)յ ես եւ կին՝ | Սարգիս եւ Թաճեր, միաբանեցաք | Ա(ստուա)ծածնիս եւ տուաք զիմ հոգոց, | եւ սպասա-



ւորք սորա խոստացան մի (ի տարումն պատ)/ա-ռագ ի տաւնի ս(ուր)ք Սարգսի, կատարիչք (աւրին)/ին յա(ստուծո)յ, ի թվ(ին) ՉԽԱ (1292):

Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 52:

Ծանոթ. բաց են թողել մի շարք բառեր և բառամասեր, այդ թվում և թվականը: Առկա են նաև սխալներ. օրինակ՝ «ես եւ կին՝»-ի փոխարեն վերծանվել է «ես Ամիր»:

ԻԶ. արձանագրություն. գավթի հարավային պատին, ներքուստ, 5 տող.

Ես՝ Գերգս, եւ աղբրանցս միաբա/նեցաք {ս} սուրբ ուխտիս եւ խոստաց/ան մեզ ի տարին :Բ: (2) աւր պատար/ագ ի տաւնի Գէորգա զաւրավարին, | կատարիչքն աւրինին ի տէ(առ)նէ :ՉԽԲ: (1293):

Հրատ. **Տեր-Սկրտչեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 47: **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 52:

ԻԷ. արձանագրություն. եկեղեցու հարավային պատին, ներքուստ, 6 տող.

Կամաւն ա(ստուծո)յ ես՝ Վասիլս, եւ Քրի/ստոնայս միաբանեցաք Ս(ուր)ք Ա(ստուա)ծած/նիս եւ տվաք ինչս, եւ սոքա խոստացան | ի տարին :Բ: (2) պատարագ ի տաւնի Յոհաննու եւ | Յակոբա, կատարիչք գրոյս աւրինին | յա(ստուծո)յ, ամէն:

Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 52:



Արձանագրություններ ԻԶ և ԻԷ

ԻԸ. արձանագրություն. եկեղեցու արևմտյան պատին՝ գավթի մեջ՝ մուտքից հյուսիս, 6 տող.

Ողորմութ(եամ)ք ա(ստուծո)յ ես՝ Սարգիս, ու | Ոհանս միաբանեցաք ս(ուր)ք ուխտիս | եւ տվաք զմեր հոգո բաժինն սրբո/ցս, եւ մեզ խոստացան ի տարին :Բ: (2) աւր | պատարագ կատարիչքն աւրինին ... | ...:

Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 52:

Ծանոթ. հրատարակիչը բաց է թողել «Ոհանս» անձնանունը:

Արձանագրություն ԻԸ

ԻԹ. արձանագրություն. գավթի հարավային պատին՝ լուսամուտից ցած, ներքուստ, 6 տող.

Յուսովն ա(ստուծո)յ, ես՝ Խութլոյս, եւ Տի/րանց {յաւ} մեր որդիս՝ Ամիրս, միաբա/նեցաք ս(ուր)ք ուխտիս եւ տվաք ինչս / սրբոցս, եւ մեզ խոստացան ի տար/ին Դ (4) աւր պատարագ, կատարիչք/ն աւրինին ...:

Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 52:

Ծանոթ. հրատարակիչը վերջում կասկածանքով նշել է ՉԾԲ (1303) տարեթիվը, որի հետքերը մենք չնշմարեցինք: Այս Տիրանցը թերևս գավթում ամփոփված Տիրանցն է:

Լ. արձանագրություն. գավթի հարավային պատին՝ լուսամուտից ցած, ներքուստ, 5 տող.

Շնորհիւն Ք(րիստոս)ի ես՝ Էմանոսս, եւ Բելխա/թունս եւ որդի մեր՝ Սադո(ւ)նս, միաբանե/ցաք ս(ուր)ք ուխտիս եւ տվաք զմեր հոգ/ոյ բաժինս եւ ընկալաք ի յամին :Բ: (2) պատարագ ի Նոր Կիրակեն, որչափ կենդանի են / մեր ծն(աւ)ղ արնե մեն մեզ ե...:

Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 52:

Ծանոթ. հրատարակիչը *«Էմանոսս եւ Բելխա/թունս»* անձնանունների փոխարեն սխալմամբ ունի *«Էտնոսս եւ Ելգաթունս»:*



Արձանագրություններ ԻԹ և Լ

ԼԱ. արձանագրություն. եկեղեցու արևմտյան պատին՝ գավթի մեջ, 8 տող.

Շնորհիւն Ք(րիստոս)ի ես՝ Դաւիթ, ու Բ/արթ-ղիմոս միաբանեցաք / ս(ուր)ք ուխտիս եւ տուաք մեր ծնո/ղք զհող, որ այ... զԽո/ցաղեղին սրբոցս, եւ մեզ խ/ոստացան ի տարին :Բ: (2) պատար/ագ ի տաւնի Դաւթի մարգարէին, / Խոցաղէղին, ամէն:

Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53:

Ծանոթ. հրատարակիչը *«ծնո/ղք զհող, որ այ... զԽո/ցաղեղին սրբոցս, եւ մեզ»* հատվածի փոխարեն ունի *«...հոգոբաժին... ... սրբոցս եւ տոքա»*, վերջում բաց է թողել *«Խոցաղէղին, ամէն»* հատվածը:





ԼԲ. արձանագրություն. գավթի հարավային որմին, ներքուստ, 6 տող.

Կամաւն ա(ստուծո)յ ես՝ աղախի(ն) / Ք(րիստոս)ի Շահրանազ, միաբա/նեցա սբ ուխ(տ)իս եւ ետու ս/ակաւ արդիւնք, եւ տոքա / յաստատեցին ի տարին Ա (՞) / աւր պատարագ ի ս ... ակ...:

Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53:

ԼԳ. արձանագրություն. գավթի արևմտյան ճակատին, արտաքուստ, կիսաեղծ 7 տող.



Կամաւ ա(ստուծո)յ ես՝ Յովանէս, միաբանեցա Ս(ուր)ք Ա|ստուածածինիս եւ զումա(՞) իմ որդ|ոցն արենագին վ(ա)ղդապետն... բարխաւսու|թ(եամ)ք արարի պահ առն (՞), եւ սպասաւորքս ետուն | ի տարին Բ (2) աւր ժամ ի տաւն ս(ուր)ք Գրիգորիս, որ | զար... | ...:

Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 54:

Ծանոթ. փորագրված պետք է լինի 1232 թ.-ից հետո:

ԼԴ. արձանագրություն. գավթի ներսում՝ թմբուկի արևմտահայաց նիստին քանդակված խաչի վերնամասում, ելնդագիր, 3 տող.

Պ|ետ|րոս:



Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53:

Ծանոթ. արձանագրված պետք է լինի 1232 թ. կամ դրանից քիչ անց: Կրում է անիական գրչարվեստի դրոշմը:

ԼԵ. արձանագրություն. բեկոր է՝ ագուցված եկեղեցու արևմտյան կողմում շարված պատի մեջ, 3 տող.

Ես՝ Խոցադեղս, եւ Գոհ... | ...(ար)դիւնքն ի շինութի(ւնն) ... | զՍ(ուր)ք Գեորգեն շաբ(ա)թ ...:



Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 54:

Ծանոթ. ակնհայտ է, որ արձանագրությունը շարունակվել է մեկ այլ քարին:

ԼԶ. արձանագրություն. եկեղեցու արևմտյան ճակտոնին՝ լուսամուտից հարավ, 3 տող.

Յ(իսու)ս Ք(րիստո)ս, զՍա|ղկաւագս | յաղաւթ|ս յիշեցէք:

Հրատ. **Տեր-Մինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53:



Սբ. Աստվածածին եկեղեցու արևմտյան ճակտոնը և առկա երեք խաչաքանդակներին կից հիշատակագրությունները (տե՛ս ԼԶ, ԼԷ և ԼԸ համարների ներքո)

ԼԷ. արձանագրություն. եկեղեցու արևմտյան ճակտոնի կենտրոնում, 2 տող.

զԴեղս յիշեց|էք:

Հրատ. առաջին անգամ:

ԼԸ. արձանագրություն. եկեղեցու արևմտյան ճակտոնին՝ լուսամուտից հյուսիս, 1 տող.

Սոսէս:

Հրատ. առաջին անգամ:

ԼԹ. արձանագրություն. գավթի հարավային պատին՝ կենտրոնական լուսամուտից արևելք, ներքուստ, կիսով չափ եղծված, սվաղի շերտի վրա սև ներկով 10 տող.

...հր(ամանաւ)...անին եւ ի պ... | սպասալարին որդի Իվանե ... մեծին Շահնշահի ես Դաւիթ ... | ...Քրդին ...եւ թոռն Վա(սլի՞) եւ իմ որդիքս ք... եւ Վաչու|(տն) ... ի Տեղերո Ա(ստուա)ծածինս ...գնել... |

Արձանագրություն ԼԹ

...հանդովն ու ջրովն ... / ...մեզ խոս(տացան ի) տարին ...աւր պատարագ զ... / ...որչափ կե(նդանի եմք) մեր ծնողացն ամեն եւ յե(տ) / ... կամ յիմոց կամ ի ... / ...խաչահանողացն առցէ / ...:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. հարկ ենք համարում նշել, որ որմերին նստած դարավոր մուրը մաքրելու դեպքում արձանագրության որոշ հատվածներ թերևս կարելի է ավելի ամբողջական վերծանել:

Գավթի ներսում պահպանված 44 տապանաքարերից 14-ը կրում են հակիրճ անթվակիր հիշատակագրություններ: Ահա դրանք.

Խ. տապանաքար.

Մամախաթուն է:

Հրատ. **Տեր-Մկրտչեան Մ.**, նշվ. հոդվ., էջ 46:

Ծանոթ. տապանաքարը տեղում չենք գտել:

ԽԱ. տապանաքար. 2 տող.
Սուլտան որդի ... / ...:
Հրատ. առաջին անգամ:

ԽԲ. տապանաքար. 2 տող.
Ստեփ(անոս) / ք(ա)հ(անա) Մարտ(իրոս):
Հրատ. առաջին անգամ:



ԽԳ. տապանաքար. 2 տող.
Վարդապետ / Մարգիս:
Հրատ. առաջին անգամ:




ԽԴ. տապանաքար. 2 տող.
Աւետիսն է իր/իցորդին:
Հրատ. առաջին անգամ:



ԽԵ. տապանաքար. 2 տող.
Վարդապետ Եր/եմիայ:
Հրատ. առաջին անգամ:



ԽԶ. տապանաքար. 1 տող.
Մարգսայ:
Հրատ. առաջին անգամ:

ԽԷ. տապանաքար. 1 տող.
Հազարշահ:
Հրատ. առաջին անգամ:




ԽԸ. տապանաքար. 1 տող.
Թամ(ա)զին է:
Հրատ. առաջին անգամ:



ԽԹ. տապանաքար. 2 տող.
Մայրածայր:
Հրատ. առաջին անգամ:

Ծ. տապանաքար. 3 տող.
Զեր/իթան/ի(ն) յիշ(եցէք):
Հրատ. առաջին անգամ:

ԾԱ. տապանաքար. 1 տող.
Տիրանց:
Հրատ. առաջին անգամ:



ԾԲ. տապանաքար. 1 տող.
Այս է հան:
Հրատ. առաջին անգամ:
Ծանոթ. թերավարտ է:




ԾԳ. տապանաքար. 1 տող.

Մար...:

Հրատ. առաջին անգամ:



ԾԴ. տապանաքար. եկեղեցու հյուսիսարևելյան ավանդատան ներսում, 1 տող.

Վ(ար)դ(ապետ) Յ(ո)վ(հաննէս):

Հրատ. **Տեր-Սինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53:



ԾԵ. տապանաքար. եկեղեցու արևելյան կողմում, 2 տող.

Վդ Մխ:

Հրատ. **Տեր-Սինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 53:

Ծանոթ. տապանաքարը տեղում չենք գտել:

ԾԶ. արձանագրություն. եկեղեցու արևմտյան ճակատին, արտաքուստ, մուտքից հյուսիս, սվաղի շերտի վրա՝ 7 տող (որից առաջին երկուսը՝ սև, 3-ը՝ կարմիր ներկով, իսկ վերջին 4 տողերը՝ փորագիր).

...շի ես՝ Վիրապշահ..., ...|ս եւ Տիրանց ... |զ Ք(րիստո)ս ա(ստուա)ծ ... (ի)|նչս ի Դ(եղերո)... | ի տարին Բ (2) ժամ ...: || Անուամբն ա(ստոծո)յ ես՝ Սմ(բատ), ... |իր սպասաւորք զաւ(ագ) ...:

Հրատ. առաջին անգամ:

Ծանոթ. վիմագրից ներքև էլ առավել եղծված հնգատող մի արձանագրություն ևս կա, որ սկսվում է «Ողորմութ(եամ)ք» բառով:



անարձանագիր տապանաքար

արձանագիր տապանաքար



ԾԷ. արձանագրություն. եկեղեցու հարավային որմի արևելյան խորշի մեջ, սպիտակ ներկով, 8 տող.

Թվ(ին) ՉԽԳ (1494), | ով եղբայրք, | եթէ կամ|աւ չարչար|իք, վարձք է ձ|եզ, թէ յակամ|այ տնտեսու|թի ...:

Հրատ. **Տեր-Սինասեան Ե.**, նշվ. հոդվ., էջ 54:

Ամփոփելով նյութը՝ հարկ ենք համարում նշել, որ, բացի ներկայացվածներից, Տեղերի վանքում առկա է առավել վատթար վիճակում գտնվող ևս մի քանի արձանագրություն (դրանք 4-ն են. *ա.* գավթի հյուսիսային որմին ներքուստ մեկ քարի վրա, հնգատող, *բ.* գավթի հյուսիսարևելյան սյան խոյակի արևմտահայաց երեսին, քառատող, *գ-դ.* եկեղեցու արևմտյան որմին, մուտքից աջ և ձախ՝ 5 և 7 տող), որոնք մենք չկարողացանք վերծանել):

«Վարքք» հանդեսի 1-10 համարների մատենագիտություն

Աշոտ Հակոբյան, Հնագիտական պեղումները և հայկական հուշարձանների վերականգնումը Արևմտյան Հայաստանում, 2011, № 4, էջ 13-24:

Աշոտ Հակոբյան, Սուրբ Գրիգոր Նարեկացու ճգնարանը, 2012, № 5, էջ 21-32:

Աշոտ Հակոբյան, գրախոսություն և քննադատություն, 2012, № 6, էջ 63-64:

Արմեն Հախնազարյանի կյանքն ու գործը, 2010, № 1, էջ 1-32 (բացառիկ):

Արմեն Տեր-Ստեփանյան, Վիմագրերը Մատենադարանի ձեռագրերում, 2013, № 8, էջ 16-44 (շարունակելի):

Գագիկ Սարգսյան, Ալեքսան Հակոբյան, Նորահայտ Կարկառ քաղաքատեղին Արցախում, 2012, № 5, էջ 43-59:

Էմմա Աբրահամյան, Նորահայտ երկու ծածկագիր Ռշտունիքից, 2011 № 4, էջ 25-28:

Էմմա Աբրահամյան, Մահլամի պանթեոնը, 2012, № 5, էջ 12-15:

Էմմա Աբրահամյան, Տպարանները հայոց հայրենիքում, 2012, № 6, էջ 1-22:

Հայկական հուշարձանների վիճակը Աղրբեջանում, 2010-2011, № 3, էջ 1-64 (բացառիկ):

Հայկական հուշարձանների վիճակը Արևմտյան Հայաստանում, 2010, № 2, էջ 1-64 (բացառիկ):

Սահակ Վարդանյան, Արևմտյան Ուկրաինայի հայկական հուշարձանները, 2013, № 9, էջ 38-64:

Սամվել Այվազյան, Գագիկ Սարգսյան, Չարեքտար գյուղի վանական համալիրի պեղումները և հետազոտությունների արդյունքները, 2011 № 4, էջ 48-57:

Սամվել Այվազյան, Գագիկ Սարգսյան, Դաղի վանքում 2008 թ. կատարված պեղումները, 2012, № 7, էջ 1-12:

Սամվել Այվազյան, Գագիկ Սարգսյան, Հոռեկավանքի պեղումները, 2013, № 9, էջ 1-11:

Սամվել Կարապետյան, Ծառաքարի վանքը, 2011, № 4, էջ 29-47:

Սամվել Կարապետյան, Զարեհավանի (Դերիկի) Սբ. Աստվածամոր վանքը, 2012, № 5, էջ 33-42:

Սամվել Կարապետյան, Հուշարձանների աղճատման երևույթները մեր օրերում, 2012, № 5, էջ 60-64:

Սամվել Կարապետյան, Նոր տվյալներ Խաթրավանքի հիմնադրման և շինարարական ընթացքի մասին, 2012, № 7, էջ 13-20:

Սամվել Կարապետյան, Ագուլիսի երկրորդ եղեռնը, 2012, № 7, էջ 22-27:

Սամվել Կարապետյան, Մրենը և նրա հուշարձանները, 2012, № 7, էջ 31-63:

Սամվել Կարապետյան, գրախոսություն և քննադատություն, 2013, № 8, էջ 45-64:

Սամվել Կարապետյան, Եղեռնի հուշարձաններն Արևմտյան Հայաստանում, 2013, № 9, էջ 12-15:

Սամվել Կարապետյան, Բագնայրի վանքի արձանագրությունները, 2013, № 9, էջ 16-37:

Սամվել Կարապետյան, Տեղերի վանքը, 2013, № 10, էջ 1-31:

Սարգիս Իսրայելյան, Էջեր իմ օրագրից (շարունակելի), 2012, № 6, էջ 23-62:

Սարգիս Իսրայելյան, Էջեր իմ օրագրից, 2013, № 8, էջ 1-15:

«Վարքք» հանդեսի 1-10 համարների մատենագիտություն, 2013, № 10, էջ 32:

Ռաֆֆի Քորքոշյան, Քեսաբի բնակչությունը 1906-2006 թթ., 2011, № 4, էջ 58-63:

Ռաֆֆի Քորքոշյան, Ի՞նչ են թաքցնում Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների թուրքական ցուցանակները, 2011, № 4, էջ 1-12:

Ռաֆֆի Քորքոշյան, Ի՞նչ են թաքցնում Արևմտյան Հայաստանի պատմական հուշարձանների թուրքական ցուցանակները, 2012, № 5, էջ 1-14:

Ռաֆֆի Քորքոշյան, 910 թ. նորահայտ խաչքարի բեկոր Խոտակերաց վանքից, 2012 № 7, էջ 21:

Ռաֆֆի Քորքոշյան, Մոռացված Խնե, 2012, № 7, էջ 28-30:

1000 - ամյակ
Վանքի Գագկաշեն
եկեղեցի


1000 - ամյակ
Հաղբատ Գառ վանքի
Սբ. Աստվածածին
եկեղեցի


1000 - ամյակ
Սևանի վանքի Սբ. Գրիգոր եկեղեցի
800 - ամյակ
Սևանի վանքի
Սբ. Աստված եկեղեցի

800
Մեծքարի Գոշի գավիթը

800
Հայկոց Թաղի վանքի
Սբ. Աստվածածին մատուռ

800
Ծղուկի Սողոմոնի վանք

400
Տաթևի Սեն ամրոցը

250
Թաղասերի կամուրջ



ՀՈՎԱՆԱՎՈՐ
ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

RAA

ՀԱՅԿԱԿԱՆ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ
ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON
ARMENIAN
ARCHITECTURE

ԵՐԵՎԱՆ - YEREVAN
2013